

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Սիրիայից և այլ
հակամարտության վայրերից
Հայաստան տեղահանված
անձանց համար



հուլիս, 2017



UNHCR 25
The UN Refugee Agency
years in Armenia





**ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ**
Միբիայից և այլ հակամարտության վայրերից
Հայաստան տեղահանված անձանց համար

*ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼ Է ԱՄՆ ՊԵՏԻՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԳՐԱՅԻԱՅԻ
ԲՅՈՒՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ*

Հուլիս, 2017



Gift of the United States Government

Սույն ձեռնարկը լրամշակվել և հրատարակվել է ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից տրված դրամաշնորհի շրջանակներում: Դրանում զետեղված տեսակետներն ու եզրակացությունները պատկանում են հեղինակներին և չեն արտացոլում ԱՄՆ պետդեպարտամենտի դիրքորոշումներն ու տեսակետները:



Ձեռնարկը լրամշակվել է Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցության CEELI INC.-ի Հայաստանյան Ներկայացուցչության կողմից **2017թ. հուլիսի դրությամբ գործող օրենսդրության հիման վրա: Այդ օրվանից մինչ այժմ կատարված օրենսդրական փոփոխությունները ներառված չեն:**

Ձեռնարկը լրամշակվել և հրատարակվել է ԱՄՆ պետդեպարտամենտի բնակչության, փախստականների և միգրացիայի վարչության կողմից Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչությանը տրամադրված «Իրավաբանական աջակցություն Հայաստանում տեղահանված և հակամարտությունից տուժած անձանց համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Սույն ձեռնարկն արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության ներկայացուցիչների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և չի ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները:

Սույն ձեռնարկի որևէ մաս չպետք է ընկալել որպես առանձին գործերի առնչությամբ տրամադրվող իրավական խորհրդատվություն:

Ողջույնի խոսք

Վերջին շրջանի ամենամեծ մարդկային ողբերգությունը Սիրիայում տեղի ունեցող հակամարտությունն է: Միլիոնավոր մարդիկ տեղահան են եղել, զրկվել ամեն ինչից, շատերն էլ զոհ են գնացել այս ահավոր իրավիճակում: Սիրիական թնջուկը իր դժվարին կնիքն է դրել նաև հայկական համայնքի վրա: Նրանց մի մասը՝ 22.000 հայ, պաշտպանություն են գտել Հայաստանում, այսօր էլ շարունակվում է հայրենիք վերադարձողների հոսքը:

Հայաստանի Հանրապետության Նախագահի հանձնարարությամբ 2012 թվականից Հայաստանում սիրիահայերի հետ տարվող աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը, որն իրականացնելով սիրիահայերի ինտեգրմանն ուղղված պետական քաղաքականությունը, համապատասխան աջակցություն է ցուցաբերում սիրիահայերի կրթական, սոցիալական, առողջապահական, զբաղվածության խթանման հարցերին, նրանց գործարար հնարավորությունների և կարողությունների դրսևորմանը:

Հայաստան տեղափոխված մեր հայրենակիցներին առնչվող կեցության, սոցիալական և աշխատանքային իրավահարաբերությունները պարզեցնելու և հեշտացնելու նպատակով փոփոխվել են տասնյակ իրավական ակտեր:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, փաստաբանների պալատի օգնությամբ մշակվել և սիրիահայերի շրջանում տարածվել են իրազեկման գրքույկներ, իրականացվում է «Սիրիահայերին իրավական աջակցություն» փաստաբանական ծրագիրը, որի շրջանակներում սիրիահայերին և իրաքահայերին տրամադրվում է անվճար իրա-

վաբանական օգնություն, ինչպես նաև ոչ բարդ գործերով դատական ներկայացուցչություն:

Հայաստանում տեղի են ունենում պետական, քաղաքական լուրջ բարեփոխումներ, կատարելագործվում և փոփոխվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխան: Այդ պատճառով ողջունելի է, որ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության իրավունքի գերակայություն նախաձեռնություն (ABA ROLI) Հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ ԱՄՆ պետդեպարտամենտի բնակչության, փախստականների և միգրացիայի վարչության (PRM) ֆինանսավորմամբ «Իրավաբանական աջակցություն Հայաստանում տեղահանված և հակամարտությունից տուժած անձանց համար» ծրագրի շրջանակներում, վերամշակվել է ձեռնարկը, որը կլինի իրավաբանական մեծ օգնություն Հայաստան տեղափոխվածների համար:

Սույն ձեռնարկը առավել ամբողջական է, քանի որ այն արդյունքն է երեք կառույցների՝ Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և ՄԱԿ ՓԳՀ-ի համագործակցության:

Տեղահանված անձանց հետ մեր ամենօրյա աշխատանքի ընթացքում մենք նկատել ենք, որ վերջիններս բավարար չափով տեղեկացված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, լավ չգիտեն իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Հույս ունենք, որ սույն լրամշակված ձեռնարկը կօգնի Հայաստանում պաշտպանություն փնտրող՝ Սիրիայից և այլ երկր-

ներից տեղահանված անձանց, տեղեկացված լինել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Ուզում եմ առանձնակի շնորհակալություն հայտնել բոլոր միջազգային, հայաստանյան պետական և հասարակական կառույցներին սիրիահայերին մատուցած տարբեր ծառայությունների, օգնության և աջակցության համար:

Հրանտ Հակոբյան
ՀՀ սփյուռքի նախարար

Ողջունի խոսք

Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչությունը հավատարիմ իր բացառապես մարդասիրական, ոչ քաղաքական մանդատին, մտահոգության առարկա հանդիսացող անձանց պաշտպանություն և աջակցություն ապահովելիս մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում է ցուցաբերում: Այդ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի փախստականներն, ինչպես նաև այլ տեղահանված անձինք լիովին իրազեկված լինեն իրենց իրավունքների մասին: Կարևոր է նաև, որ նրանք ծանոթ լինեն հյուրընկալող երկրի այն օրենքներին, որոնք կարգավորում են քաղաքացիական ակտերը, ինչպիսիք են ամուսնությունը և ծննդյան գրանցումը, պետք է նաև իրազեկված լինեն ապրուստի միջոցների հասանելիությունը կարգավորող կանոնների մասին, լինեն դրանք աշխատանքային հարաբերություններ և աշխատողների պաշտպանությունը կարգավորող նորմեր, թե բիզնեսի գրանցման և հարկման հետ կապված կանոններ, որոնք թույլ կտան նրանց ինքնագրավածությամբ և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել:

Իրավաբանական ուղղորդումը, որը տրամադրվում է սույն ձեռնարկով, կօգնի տեղահանված բնակչությանը լիովին տիրապետել և հարգել իրենց հյուրընկալող երկիր հանդիսացող Հայաստանի նորմերը՝ այդպիսով նպաստելով ապաստանի համակարգի ամբողջականությանը և պետական մարմինների և Հայաստանի բնակչության կողմից բարյացակամ վերաբերմունքի պահպանմանը:

Բացի այդ, ուղղորդումը, որը տրամադրում է սույն ձեռնարկը, գիտելիքով կհոգարացնի Հայաստանում տեղահանված բնակչությանը, ի վերջո օգնելով նրանց ապրել ինքնուրույն կյանքով, իրենց ապագայի հետ կապված ճշգրիտ որոշումներ կայացնել, դառնալ համայնքի ինքնաբավ և ակտիվ անդամներ նպաստելով Հայաստանի տնտեսության և հասարակության հետագա զարգացմանը:

Քրիստոֆ Բիրվիրթ

ՄԱԿ ՓԳՀ Ներկայացուցիչը Հայաստանում

Ողջունի խոսք

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, նկատի ունենալով տեղահանված անձանց համար պաշտպանություն, պատշաճ ընդունելություն ապահովելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում նրանց ինտեգրմանն ուղղված քայլեր ձեռնարկելու կարևորությունը, 2013-2014 թվականներին ձեռնամուխ եղավ «Միրիահայերին իրավական աջակցություն» փաստաբանական ծրագրի իրագործմանը:

Ծրագրի առաջին փուլը ներառել է Միրիայից տեղահանված անձանց անվճար իրավաբանական օգնության տրամադրում՝ իրավախորհրդատվություն, պետական մարմիններում ներկայացուցչություն, ինչպես նաև ոչ բարդ գործերով դատական ներկայացուցչություն:

Երկրորդ փուլով իրականացվել է ծրագրի առաջին փուլի ընթացքում արժարժված և այլ ուսումնասիրություններով երևան եկած առավել հաճախ տրվող հարցերի վերաբերյալ արևմտահայերենով, արևելահայերենով, անգլերեն և արաբերեն լեզուներով իրավական ձեռնարկի մշակում, որը հրապարակվել է 2014թ. սեպտեմբերին: Ձեռնարկը մինչ օրս ծառայել է որպես ուղեցույց և հնարավորություն տվել Միրիայից և այլ հակամարտության վայրերից տեղահանված անձանց կողմնորոշվելու Հայաստանի Հանրապետության իրավական միջավայրում:

Կարևոր է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը Միրիայում հակամարտության բռնկման առաջին իսկ օրվանից սատար է եղել տեղահանված անձանց: Դա արտահայտվել է

պետական գործունեության տարբեր ոլորտներում՝ իրավական ակտերի ընդունումից (որոնք նպաստում են սիրիահայերի տարբեր խնդիրների արագ և նպաստավոր լուծմանը) մինչև աշակցություն միկրովարկերի տրամադրման ձևով: Կարելի է առանձնացնել սիրիահայերի պաշտպանության հետևյալ երեք ուղիները՝ քաղաքացիության ձեռքբերում պարզեցված կարգով, ապաստանի տրամադրում արագացված ընթացակարգով, որոնք հանգեցրել են 100 տոկոսանոց ճանաչման արդյունքի, ժամանակավոր, մշտական, հատուկ կացության կարգավիճակների արտոնյալ տրամադրում:

Չնայած սիրիահայերի պաշտպանության վերոնշյալ միջոցների առկայությանը, այնուամենայնիվ, սիրիահայերի աշակցությամբ զբաղվող փորձագիտական խումբը տեղահանված անձանց հետ առօրյա աշխատանքի ընթացքում նկատել է, որ վերջիններս բավարար չափով տեղեկացված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց ընձեռնվող հնարավորությունների, ինչպես նաև դրանց հետ կապված բարենպաստ և անբարենպաստ հետևանքների մասին:

Այս լրամշակված ձեռնարկը կօգնի Հայաստանում պաշտպանություն փնտրող՝ Սիրիայից տեղահանված անձանց, տեղեկացված լինել և համապատասխան որոշում կայացնել, թե պաշտպանության առկա միջոցներից ո՞րն է առավել նախընտրելի:

Ավելին, փախստականների և տեղահանված այլ անձանց պաշտպանությունը հիմնականում նրանց իրավունքների պաշտպանության և իրականացման ապահովումն է: Սա իր

հերթին սերտորեն կապված է տեղահանված անձանց՝ իրենց իրավունքների, աջակցության առկա ծրագրերի և դրանց հետ կապված ընթացակարգերի մասին տեղեկացվածության հետ: Հիշյալ անձանց կողմից բարձրացված իրավական հարցերը վերաբերվում են փաստաթղթերին, տնտեսական իրավունքներին ու հնարավորություններին, միգրացիայի ապագա ծրագրերի վրա ազդեցությանը, կրթության և քաղաքացիական ծառայության մատչելիությանը, զինվորական ծառայության պահանջներին, սոցիալական պաշտպանության ու նպաստների մատչելիությանը և անձնական ու հասարակական կյանքի շատ այլ ասպեկտների:

Կարծում եմ, որ սույն լրամշակված ձեռնարկն օգտակար կլինի Սիրիայից տեղահանված անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու և գործունեություն ծավալելու ընթացքում իրենց հիմնական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկման և իրենց օրինական շահերի պաշտպանության առումներով:

Արա Զոհրաբյան
ՀՀ փաստաբանների
Պալատի նախագահ

Բովանդակություն

1. Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի վերաբերյալ հարցեր.....	13
2. ՀՀ-ում բնակությունն օրինականացնելու վերաբերյալ հարցեր.....	15
3. Քաղաքացիության վերաբերյալ հարցեր.....	18
4. Փախստականի կարգավիճակի վերաբերյալ հարցեր...	31
5. Կացության կարգավիճակի վերաբերյալ հարցեր.....	50
6. Ծննդի պետական գրանցման վերաբերյալ հարցեր.....	59
7. Ամուսնության (ամուսնալուծության) պետական գրանցման վերաբերյալ հարցեր.....	62
8. Մահվան պետական գրանցման վերաբերյալ հարցեր...	67
9. Զինվորական ծառայության վերաբերյալ հարցեր.....	69
10. Սոցիալական իրավունքներին վերաբերող հարցեր...	71
10.1. Կրթության իրավունքի վերաբերյալ հարցեր.....	71
10.2. Աշխատանքի ընտրության վերաբերյալ հարցեր.....	78
10.3. Բժշկական օգնության վերաբերյալ հարցեր.....	84
10.4. Նպաստների վերաբերյալ հարցեր.....	85
10.5. Հաշմանդամության վերաբերյալ հարցեր.....	91

10.6. Հանրային ծառայությունների համարանիշի վերաբերյալ հարցեր.....	96
11. Մշտական բնակության հասցեում հաշվառվելու վերաբերյալ հարցեր.....	98
12. Վարորդական վկայական ստանալու վերաբերյալ հարցեր.....	99
13. Անվան փոփոխման վերաբերյալ հարցեր.....	101
14. Ընտրելու իրավունքի վերաբերյալ հարցեր.....	105
15. Մաքսային օրենսդրության վերաբերյալ հարցեր.....	107
16. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ հարցեր.....	113
17. Հարկերի վերաբերյալ հարցեր.....	122
18. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան (Պաշտպան).....	141
19.Այլ հարցեր.....	146
Հավելված 1	149

1. Հայաստանի Հանրապետության մուտքի վիզայի վերաբերյալ հարցեր

**Ինչպե՞ս մուտք գործել Հայաստանի Հանրապետություն
(ՀՀ)**

Անձինք ՀՀ կարող են մուտք գործել վավերական անձնագրի առկայության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գորքերի թույլտվության դեպքում: ՀՀ մուտք գործելու համար, անհրաժեշտ է հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը՝

- Մուտքի վիզա,
- ՀՀ-ում կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթ:

Մինչև 18 տարեկան օտարերկրացիները կարող են մուտք գործել ՀՀ իրենց ծնողների, ծնողներից որևէ մեկի, այլ օրինական ներկայացուցչի կամ ուղեկցողի հետ միասին կամ միայնակ, եթե նրանք գալիս են Հայաստանի Հանրապետություն իրենց ծնողների, ծնողներից որևէ մեկի, այլ օրինական ներկայացուցչի մոտ կամ ընդունող կազմակերպություն:

Վերը նշված պահանջները չեն վերաբերում ՀՀ-ում ապաստան հայցելու նպատակով երկիր ժամանող անձանց (առավել մանրամասն տես բաժին 4):

Ո՞ր դեպքերում անձին չի թույլատրվում մուտք գործել ՀՀ

ՀՀ պետական սահմանի անցման կետ ժամանած կամ ՀՀ պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի մերժում ստացած կամ սահմանային հսկողություն իրականացնող

մարմնի կողմից մուտքի թույլտվություն չստացած օտարերկրացիների մուտքը չի թույլատրվում ՀՀ տարածք՝

1. առանց անձնագրի, դրան փոխարինող փաստաթղթի
2. կամ անվավեր անձնագրի:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 6

Որքա՞ն ժամանակով է տրվում ՀՀ մուտքի վիզան

ՀՀ մուտքի վիզան տրվում է մեկանգամյա մուտքի համար, ՀՀ-ում մինչև 120 օր գտնվելու ժամկետով: Այն կարող է երկարաձգվել առավելագույնը մինչև 60 օր ժամկետով:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 9

Ինչպե՞ս ձեռք բերել ՀՀ մուտքի վիզա

Սիրիայի՝ ազգությամբ հայ քաղաքացիները կարող են ձեռք բերել ՀՀ մուտքի վիզա առանց հրավերի: ՀՀ պետական սահմանի անցման կետերում վիզաները տրվում են ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ստորաբաժանման կողմից:

Ազգությամբ հայ լինելը հավաստող փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է սույն ձեռնարկի բաժին 3-ում: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 9

Սիրիահայերն ազատվում են վիզաների համար վճարումներից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի հոդված 26

Որո՞նք են Հայաստանում առանց իրավական հիմքի մնալու հետևանքները

Օտարերկրացիների կողմից ՀՀ-ում առանց վավերական արտոնագրի կամ կացության կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթերով բնակվելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50.000-100.000 ՀՀ դրամի չափով:

Տուգանքների և տուրքերի չափերը նշված են այնպես, ինչպես ուժի մեջ են եղել ձեռնարկի հրապարակման պահին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հոդված 201

2. ՀՀ-ում բնակությունն օրինականացնելու վերաբերյալ հարցեր

ՀՀ-ում բնակությունը օրինականացնելու համար առկա է երեք տարբերակ՝

1. Ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն (տես բաժին 3),
2. Ձեռք բերել փախստականի կարգավիճակ (տես բաժին 4),
3. Ձեռք բերել կացության կարգավիճակ (տես բաժին 5):

Որո՞նք են հիմնական նկատառումները, որոնցով պետք է առաջնորդվել նշված տարբերակներից որևէ մեկն ընտրելիս

- Քաղաքացիությունը հանդիսանում է հարատև լուծում տեղահանման խնդրին՝ ի տարբերություն փախստականի կարգավիճակի և կացության կարգավիճակի, որոնք ժամանակավոր բնույթ են կրում: Քաղաքացիության համար կարող եք դիմել նույնիսկ փախստականի կամ կացության

կարգավիճակ ձեռք բերելուց հետո, սակայն քաղաքացիություն ձեռք բերելուց հետո փախստականի կամ կացության կարգավիճակ ձեռք բերել չեք կարող: Քաղաքացիություն կարող եք ձեռք բերել մինչև ՀՀ ժամանելը, սակայն դրանից հետո մյուս երկու կարգավիճակների համար այլևս չեք կարող դիմել: Բոլոր երեք կարգիճակներից հնարավոր է հրաժարվել: Քաղաքացիությունից հրաժարումը, սակայն, հնարավոր է միայն հետևյալ բոլոր պայմանների բավարարման դեպքում՝

- Դուք ունեք այլ պետության քաղաքացիություն կամ կարող եք ներկայացնել տեղեկանք այլ պետության իրավասու մարմնից այդ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին և
- Ձեր նկատմամբ հարուցված չէ քրեական հետապնդում,
- Ձեր նկատմամբ առկա չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ,
- ՀՀ քաղաքացիությունից Ձեր դուրս գալը չի հակասում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին,
- Դուք չունեք պետության հանդեպ չկատարված պարտավորություններ:

Ի՞նչ կարգով է տեղի ունենում քաղաքացիությունից հրաժարումը

Անձը ՀՀ քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետևանքով:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1 հոդված

ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է միայն ՀՀ նախագահի հրամանագրով:

Տվյալ դեպքում քաղաքացին քաղաքացիության դադարեցման մասին դիմումն անձամբ ներկայացնում է Հայաստանի Հայաստանում՝ ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն, իսկ օտարերկրյա պետությունում ՀՀ դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ:

ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի N1390-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 6-րդ կետ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

1. դիմում.
2. անձնագիրը և դրա պատճենը,
3. 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր),
4. ամուսնության վկայականը (առկայության դեպքում) և դրա պատճենը,
5. իր երեխայի ծննդյան վկայականը և դրա պատճենը,
6. զինվորական գրքույկը (զինապարտ քաղաքացիների համար),
7. պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը,
8. այլ պետության քաղաքացիություն ունենալու դեպքում տվյալ պետության իրավասու մարմնի կողմից տրված անձնագիրը և նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը
9. օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից տրված գրավոր հավաստում (տեղեկանք) տվյալ պետության

քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին, եթե դիմումատուն չունի այլ պետության քաղաքացիություն:

ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի N1390-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 2-րդ կետ

3. Քաղաքացիության վերաբերյալ հարցեր

Որո՞նք են ՀՀ քաղաքացու կարգավիճակի հիմնական հետևանքները

ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում՝

- ձեռք կբերեք ՀՀ քաղաքացու անձնագիր, դրանով ճամփորդելու, ինչպես նաև ՀՀ-ում օրինական բնակվելու և ՀՀ դիվանագիտական պաշտպանությունից անժամկետ օգտվելու իրավունք,
- կօգտվեք ցանկացած պահի ՀՀ մուտք գործելու իրավունքից, զինապարտության տարիքի քաղաքացիները պարտավոր կլինեն ծառայել ՀՀ զինված ուժերում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- ձեռք կբերեք ՀՀ քաղաքացիների համար նախատեսված պետական պատվերի շրջանակներում անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունք՝ մրցութային հիմունքներով,
- կունենաք սեփականության իրավունքով հող ձեռք բերելու հնարավորություն,

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

ՀՀ Սահմանադրության 2015թ. դեկտեմբերի 6-ի նոր խմբագրության 48-րդ հոդված

- Ձեր ազգությամբ ոչ հայ ամուսինը և ծնողը կարող են ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն առանց բավարարելու երեք տարի ՀՀ-ում բնակվելու և հայերենի իմացության պահանջները,
- Ձեր ազգությամբ ոչ հայ ամուսինը և մերձավոր ազգականները (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) իրավունք կունենան ՀՀ-ում ստանալու կացության կարգավիճակ:
- Միրիայի այս պահին գործող օրենսդրության համաձայն՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հետևանքով Միրիայի քաղաքացիությունից չեք զրկվի: Սակայն ապագայում օրենսդրության փոփոխության հավանականությունը հնարավոր չէ բացառել: Եթե ունեք մտահոգություններ, կապված ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հետևանքով Միրիայի քաղաքացիությունից զրկվելու հետ, կարող եք խորհրդակցել ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գրասենյակի ներկայացուցչի հետ.

*Քաղաքացիության մասին Միջին Արևելքի օրենսդրության վեր-
լուծության համար կարող էք ծանոթանալ անգլերենով հասա-
նելի հետևյալ աշխատությանը՝ «Z Albarazi, “The Stateless Syrians
– Report of the Middle East and North Africa Nationality and
Statelessness Research Project”, Tilburg Law School Legal Studies
Research Paper Series, [2013]», հասանելի է
http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2269700 կայ-
քում:*

Ուլքե՞ր կարող են ՀՀ քաղաքացիություն ստանալ

ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գոր-
ծունակ, օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ
ՀՀ օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ ի-
րավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար,
երթե՝

1. օրենքով սահմանված կարգով վերջին 3 տարին մշտապես
բնակվել է ՀՀ-ում,
2. կարող է բացատրվել հայերեն լեզվով և
3. ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը:

Վերը նշվածը վերաբերում է այն անձանց, ովքեր ազգու-
թյամբ հայ չեն:

Ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն ձեռք են բերում
պարզեցված կարգով՝ առանց վերոգրյալ 3 կետերի պարտադիր
լինելու:

Առանց վերոնշյալ 1-ին և 2-րդ կետերով սահմանված պա-
հանջների պահպանման՝ ՀՀ քաղաքացիություն կարող է ստա-
նալ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը՝

1. ով ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա,
2. ում ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է ՀՀ-ում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար,
3. ով 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից:
4. ով ՀՀ-ում ճանաչվել է փախստական կամ հանդիսանում է ՀՀ-ում բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձ:
«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ՀՀ քաղաքացիության ստանալու համար դիմելիս

ՀՀ քաղաքացիության ստանալու համար դիմելիս անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում,
2. անձնագիրը և դրա պատճենը,
3. 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր),
4. ծննդյան վկայականը և դրա պատճենը,
5. ամուսնության վկայականը և դրա պատճենը,
6. ամուսնու անձնագիրը և դրա պատճենը կամ տեղեկանք ամուսնու քաղաքացիության մասին,
7. երեխայի ծննդյան վկայականը և դրա պատճենը կամ ՀՀ քաղաքացիությունը հաստատող վկայականը և դրա պատճենը, կամ ՀՀ քաղաքացու անձնագիրը և դրա պատճենը,

8. քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և ՀՀ կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները,
9. ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթերից որևէ մեկը (հայազգի քաղաքացիների համար),
10. պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը (1000 ՀՀ դրամ):

Ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն ստանալու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում,
2. անձնագիրը և դրա պատճենը,
3. 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր),
4. ծննդյան վկայականը և դրա պատճենը,
5. ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթերից որևէ մեկը
6. պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը (1000 ՀՀ դրամ)

Պետական տուրքի վճարումից ազատվում են ազգությամբ հայերը, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է այնպիսի արտակարգ իրավիճակ, որն սպառնում է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը:

ՀՀ կառավարության որոշում 22.11.12թ. N 1469-Ն

Եթե Ձեզ մոտ բացակայում է որևէ փաստաթուղթ իրավական խորհրդատվության համար, ապա դիմեք ՀՀ ոստիկանու-

թյան անձնագրային կամ վիզաների վարչություն կամ իրավա-
կան խորհրդատվություն տրամադրող կազմակերպություններ,
որոնք թվարկված են սույն ձեռնարկի հավելված 2-ում:

Որոշք են ազգությամբ հայ լինելը հաստատող փաս- տաթղթերը

- ազգությամբ հայ լինելու վերաբերյալ նշում պարունակող անձնագիրը,
- ազգությամբ հայ լինելու վերաբերյալ նշում պարունակող ծննդյան վկայականը,
- քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայակա-
նը ճամփորդական փաստաթուղթը, ՀՀ-ում կացության
կարգավիճակը հաստատող փաստաթուղթը՝ ազգությամբ
հայ լինելու մասին նշումով,
- ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի թիվ
1390-Ն որոշման N 4 հավելվածում նշված եկեղեցական
կառույցների կողմից տրված մկրտության մասին փաս-
տաթուղթը՝ հաստատված օտարերկրյա պետություննե-
րում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ
հյուպատոսական հիմնարկի կողմից, մկրտվածի կամ նրա
ծնողի ազգությամբ հայ լինելու մասին նշումով,

*(Միրիայում դրանք հետևյալ եկեղեցական կառույցներն
են. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Դամասկոսի Հայոց Թեմ; Մեծի
Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն՝ Ջեզիրեի Թեմ (Հալեպ); Հայ
Կաթողիկե Եկեղեցի՝ Բերիո Թեմ (Հալեպ), Դամասկոսի Թեմ,
Կամիշլիի Թեմ):*

- օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից
տրված և ապոստիլով հաստատված կամ հյուպատոսա-

կան վավերացմամբ՝ ազգությամբ հայ լինելու մասին փաստաթուղթը,

- ազգությամբ հայ լինելու հանգամանքը հիմնավորող այլ փաստաթուղթ՝ հաստատված օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից,
- ծնողի (կամ պապի, տատի, հարազատ քրոջ կամ եղբոր) ծննդյան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, որում առկա է ազգությամբ հայ լինելու վերաբերյալ նշում: Դուք կարող եք ներկայացնել նաև Ձեր համահայր կամ համամայր եղբոր կամ քրոջ ծննդյան վկայականը կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթ, եթե Ձեր արյունակից ծնողն ազգությամբ հայ է: Այս կետով նախատեսված փաստաթուղթ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է նաև ներկայացնել համապատասխան անձի հետ ազգակցական կապը հիմնավորող փաստաթուղթ:

ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 29-ի N 1522 –Ն; 2007թ. նոյեմբերի 23-ի N 1390-Ն որոշումներ

Ի՞նչ ընթացակարգով է ձեռք բերվում ՀՀ քաղաքացիությունը

1. Անձն անձամբ դիմում պետք է ներկայացնի օտարերկրյա պետությունում՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:

ՀՀ տարածքում՝ ՀՀ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:

2. Դիմումատուի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար փաստաթղթերն ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության կողմից ուղարկվում են ՀՀ արտաքին գործերի նախարարություն Ազգային անվտանգության ծառայություն:
3. Ամբողջական տեղեկատվության հավաքագրումից հետո ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից փաստաթղթերն ուղարկվում են ՀՀ նախագահի աշխատակազմ:
4. Անձը ծանուցվում է, որ փաստաթղթերն ուղարկվել են ՀՀ նախագահի աշխատակազմ:
5. ՀՀ Նախագահը արձակում է հրամանագիր ՀՀ քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ:
6. ՀՀ Նախագահի հրամանագրի քաղվածքին ծանոթանալու և երդման արարողությանը մասնակցելու նպատակով անձը ծանուցվում է:
7. Օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում է ՀՀ քաղաքացու անձնագրավորում:

Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները և միջնորդությունները ներկայացվում են գրավոր և քննարկվում են վեցամսյա ժամկետում: Դիմումի մերժման դեպքում կրկին կարելի է դիմել մերժման օրից մեկ տարի հետո:

ՀՀ քաղաքացիություն ստանալու մասին դիմումների ընթացքի վերաբերյալ տեղեկությունները 3-օրյա ժամկետում վարչությունն ուղարկում է դիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեով և (կամ) բջջային հեռախոսահամարներին՝ SMS (ԷսԷ-մԷս) հաղորդագրությամբ, եթե դիմումատուն հարցաթերթիկում

կամավոր լրացրել է իր էլեկտրոնային փոստի հասցեն և (կամ) բջջային հեռախոսահամարը:

Ղիմումատուն ղիմումի ընթացքի վերաբերյալ կարող է տեղեկանալ նաև վարչության պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ մուտքագրելով իրեն տրված անհատական ծածկագիրը: Անհատական ծածկագիրը տրվում է ղիմումը վարչություն մուտքագրվելուց հետո ղիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսահամարներին՝ SMS (ԷսԷմԷս) հաղորդագրությամբ ուղարկվող տեղեկության հետ միաժամանակ:

ՀՀ քաղաքացիության ստացման ընթացակարգը

ՀՀ քաղաքացիություն ստանալու համար անձն անձամբ ղիմում և ներկայացնում է օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր՝

ա. օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ, որը ՀՀ արտաքին գործերի նախարարության համապատասխան եզրակացությամբ ուղարկվում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն.

բ. ՀՀ տարածքում ՀՀ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:

Վերոիշյալ փաստաթղթերը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ուղարկվում են ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով, իսկ լրացուցիչ տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում փաս-

տաթղթերն ուղարկվում են նաև ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ համապատասխան եզարակացություն ստանալու: Հիշյալ մարմիններից փաստաթղթերը (եզրակացությունը) ստանալուց հետո ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը դրանք ուղարկում է ՀՀ Նախագահի աշխատակազմ՝ ՀՀ Նախագահի հրամանագրով ՀՀ քաղաքացիություն շնորհելու համար: Միաժամանակ քաղաքացին ծանուցվում է, որ փաստաթղթերն ուղարկվել են ՀՀ Նախագահի աշխատակազմ:

ՀՀ Նախագահի հրամանագրով ՀՀ քաղաքացիություն շնորհելուց հետո քաղաքացին ծանուցվում է հրամանագրին ծանոթանալու և երդման արարողությանը մասնակցելու համար:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում է ՀՀ քաղաքացու անձնագրավորում:

Արդյ՞նք կարող է անձը ՀՀ քաղաքացու անձնագիրն առաջին անգամ ստանալ օտարերկրյա պետությունում

Լիբանանի Հանրապետության, Սիրիայի Արաբական Հանրապետության և Իրաքի Հանրապետության քաղաքացիներին «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու կապակցությամբ առաջին անգամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը կարող է տրվել տվյալ անձի՝ մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալն ունեցած քաղաքացիության երկիր հանդիսացող օտարերկրյա պետության Հայաստանի

Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում:

ՀՀ կառավարության 2012 թ. հունիսի 26-ի N 951-Ն որոշում

Ուլքե՞ր են ազատվում անձնագրերի համար վճարից

Օտարերկրյա պետություններում վավերական ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու համար վճարից ազատվում են ազգությամբ հայ այն օտարերկրյա քաղաքացիները կամ ՀՀ քաղաքացիները, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է այնպիսի արտակարգ իրավիճակ, որը սպառնում է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը:

ՀՀ կառավարության 2012 թ. նոյեմբերի 22-ի N 1469 -Ն որոշում

Արդյ՞՞՞ք ՀՀ քաղաքացիությունն ձեռք բերելու դեպքում Ձեր երեխան նույնպես ձեռք կբերի ՀՀ քաղաքացիություն

ՀՀ քաղաքացիությունն ձեռք բերած ծնողների երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝

- 1) եթե առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, կամ
- 2) եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը, կամ

3) եթե ծնողների (ծնողի) համաձայնության բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

14-18 տարեկան երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար տալիս է գրավոր համաձայնություն:

ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն մատնի» ՀՀ օրենքի հոդված 16

Եթե Ձեր երեխան ծնվել է Ձեր կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելուց հետո, ապա ի՞նչ քաղաքացիություն կունենա նա

Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Համաձայնության որևէ կոնկրետ ձևաթուղթ չկա: Համաձայնությունը պետք է ստորագրվի երկու ծնողների կող-

մից: Եթե ծնողներից մեկը բացակայում է Հայաստանից, ապա նրա ստորագրության իսկությունը պետք է վավերացվի նոտարի կողմից:

Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝

- 1) եթե նա ծնվել է Հայաստանի Հանրապետությունում կամ,
- 2) եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ
- 3) եթե ծնողները մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում:

Կորցնում է արդյո՞ք երեխան ՀՀ քաղաքացիությունը, այն դեպքում, երբ ծնողները կորցնում են ՀՀ քաղաքացիությունը.

ՀՀ քաղաքացիությունը կորցրած ծնողների երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:

Եթե ծնողներից մեկը կորցրել է ՀՀ քաղաքացիությունը, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է, ապա նրանց երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է ՀՀ -ից դուրս, և առկա է ՀՀ -ի քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

14-18 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը իր գրավոր համաձայնության առակայության դեպքում, եթե չունի պետության հանդեպ չկատարված՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտավորություններ:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված դեպքերում ե-

րելիս կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ քաղաքացիության դադարեցման հետևանքով, ծնողի ներկայացրած դիմումի հիման վրա, սույն օրենքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար նախատեսված ընդհանուր հիմունքներով:

Այսինքն, երեխայի ծնողների կողմից իրենց ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելուց հետո, պետք է երեխայի ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացնեն, որի հիման վրա կդադարեցվի երեխայի ՀՀ քաղաքացիությունը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն մասին» ՀՀ օրենքի հոդված 17

Հավելյալ տեղեկությունների համար դիմել. ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն, հասցե՝ ք.Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք, թեժ գիծ՝ (010) 37-02-64:13:

4. Փախստականի կարգավիճակի վերաբերյալ հարցեր

Որո՞նք են փախստականի կարգավիճակի համար դիմելու և փախստականի կարգավիճակ ստանալու հետևանքները

- Ձեզ փախստական ճանաչելու մասին որոշման կայացումից հետո ձեռք կբերեք կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ, դրանով ճամփորդելու, ինչպես նաև ՀՀ-ում օրինական բնակվելու այնքան ժամանակ, քանի դեռ առկա են այն հանգամանքները, որոնք ստիպել են Ձեզ լքել Ձեր քաղաքացիության (մշտական բնակության) երկիրը:

- Ձեր ապաստանի դիմումի քննարկման ողջ ժամանակահատվածում, ինչպես նաև փախստականի կարգավիճակ ստանալու դեպքում Ձեր նկատմամբ կկիրառվի միջազգային և ազգային օրենսդրությամբ նախատեսված չվերադարձելիության սկզբունքը, ինչը նշանակում է, որ առանց Ձեր համաձայնության չեք կարող վերադարձվել Ձեր ծագման երկիր (Ձեր քաղաքացիության կամ մշտական բնակության երկիր) կամ ուղարկվել որևէ այլ երկիր:
- Քանի դեռ փախստականի կարգավիճակի համար Ձեր դիմումը ընթացքի մեջ է, Ձեզ կտրամադրվի ապաստան հայցողի անձը հաստատող վկայական, որը ՀՀ-ում Ձեր օրինական բնակությունը հաստատող փաստաթուղթ է:
- Ապաստանի ընթացակարգի ժամանակ կարող եք պետական լիազոր մարմնի կողմից տրված ուղեգրի հիման վրա տեղավորվել ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում՝ **ազատ սենյակների առկայության դեպքում**:
- Փախստականի կարգավիճակ ձեռք բերելուց հետո ձեռք կբերեք ՀՀ քաղաքացիներին հավասար մի շարք իրավունքներ, ինչպես, օրինակ,
 - աշխատանքի իրավունքը,
 - հիմնական և բարձրագույն կրթության իրավունքը,
 - բժշկական օգնություն ստանալու իրավունքը,
 - սոցիալական ապահովության իրավունքը,
 - մտավոր սեփականության իրավունքը,
 - ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունքը:

- Փախստական ճանաչվելու դեպքում Ձեր ընտանիքի անդամները (խնամքի տակ գտնվող անձինք) նույնպես իրենց համաձայնությամբ կճանաչվեն փախստական,
- Դուք իրավունք կունենաք ՀՀ-ում վերամիավորվելու ՀՀ-ից դուրս գտնվող Ձեր ընտանիքի անդամների (խնամքի տակ գտնվող անձանց) հետ:
- Դուք չեք ծառայի ՀՀ զինված ուժերում:
- Դուք չեք կարողանա հող գնել որպես Ձեր սեփականություն:
- Դուք չեք կարողանա մասնակցել համապետական ընտրությանը (Ազգային ժողովի):

Ո՞վ է փախստականը

«Փախստականների կարգավիճակի վերաբերյալ» 1951թ. կոնվենցիայի ինչպես նաև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ փախստական է համարվում այն օտարերկրյա քաղաքացին, ով՝

- գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս,
- այդ երկրում որոշակի հիմքերով (ռասա, կրոն, ազգային կամ սոցիալական որոշակի խմբի պատկանելություն, քաղաքական հայացքներ) հետապնդումների ենթարկվելու հիմնավոր երկյուղ ունի և
- չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից:

Նույնը վերաբերում է նաև քաղաքացիություն չունեցող անձանց՝ կապված իրենց մշտական բնակության երկրի հետ: «- Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փախստական է հա-

մարվում նաև այն օտարերկրյա քաղաքացին, ով ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը, համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով: Փախստական է համարվում նաև այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որին պաշտոնապես փախստական են ճանաչել Կոնվենցիան ստորագրած այլ պետություններ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մաս

Ո՞րն է համարվում «իր քաղաքացիության երկիրը»

Մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձի համար «իր քաղաքացիության երկիր» հասկացությունը նշանակում է այդ երկրներից յուրաքանչյուրը, որի քաղաքացին է նա: Այդ դեպքում անձը համարվում է իր քաղաքացիության երկրների պաշտպանությունը կորցրած, եթե նա սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում նշված պատճառներով չի կարող օգտվել իր քաղաքացիության երկրներից որևէ մեկի պաշտպանությունից:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մաս

Ենթակա են արդյո՞ք պատասխանատվության ապաստան հայցողները և փախստականները ՀՀ սահմանը ապօրինի անցնելու համար

Ապաստան հայցողները և փախստականները ՀՀ ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 28

Տեղեկություն

ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի գործողությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված ապաստանի իրավունքից օգտվելու համար օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 329-րդ հոդվածի 3-րդ մաս

Կա՞ն հանգամանքներ, որոնց պարագայում անձը չի ճանաչվի փախստական նույնիսկ այն պարագայում, որ նա բավարարում է փախստականի սահմանման պահանջներին

Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի ճանաչվում փախստական, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա՝

1. կատարել է հանցագործություն ընդդեմ խաղաղության, պատերազմական հանցագործություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություն,

2. կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործությունն ՀՀ տարածքից դուրս նախքան ՀՀ-ում ապաստան հայցող դառնալը,
3. մեղավոր է ճանաչվել Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին հակասող արարքների կատարման մեջ:

Ապաստանի տրամադրումը կարող է մերժվել այն փախստականին, որը ժամանել է երրորդ ապահով երկրից, որտեղ նա չունի հետապնդման, մարդու իրավունքների խախտումների կամ իր երկիր վերադարձվելու երկյուղ, կամ չունի արտաքին հարձակման, համատարած բռնության, այլ երկրի տիրապետության տակ գտնվելու, ներքին հակամարտությունների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների (վտանգների) ենթարկվելու երկյուղ, ինչպես նաև, կարող է օրինական կերպով վերադառնալ այն երկիր, որտեղից եկել է:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 11

Ո՞ր մարմինն է անձին ճանաչում փախստական և որքա՞ն ժամկետում

Հայաստանում ապաստանի հայցեր քննում և դրանց վերաբերյալ որոշում կայացնում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը (ՄՊԾ) դիմումի ներկայացման պահից եռամսյա ժամկետում ընթացքում: Առանձին դեպքերում ապաստանի դիմումի քննարկման ժամկետը ՄՊԾ-ի որոշմամբ կարող է երկարաձգվել 3 ամսով:

Տեղեկություն. 2017թ. ապրիլ ամսվա դրությամբ Միրիայի քաղաքացիների կողմից ներկայացված ապաստանի հայցերի բավարարման գործակիցը կազմում է 100%:

Ի՞նչ է ապաստանը

Ապաստանը օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ-ում շնորհված պաշտպանություն է:

Ինչպե՞ս դիմել ապաստան ստանալու համար

Անհրաժեշտ է՝

1. ՀՀ պետական սահմանի անցման կետերում՝ Դիմում կամ խնդրանք ներկայացնել (բանավոր, գրավոր, ժեստերի լեզվով կամ հաղորդակցության որևէ այլ միջոցով առերես արված ցանկացած հայտարարություն, որն արտահայտում է ՀՀ-ում պաշտպանություն գտնելու նրա ցանկությունը) ՀՀ սահմանապահ գործերին,
1. ՀՀ տարածք մուտք գործելուց հետո՝ դիմում ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն (ՄՊԾ) կամ ՀՀ ոստիկանություն: Ապաստանի խնդրանքը կարող է ներկայացվել նաև «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում:
2. Եթե անձը գտնվում է ազատագրկման վայրում՝ ազատագրկման վայրի վարչակազմին բանավոր, գրավոր, ժեստերի լեզվով կամ հաղորդակցության որևէ այլ միջոցով առերես արված ցանկացած հայտարարություն, որն արտահայտում է Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն գտնելու նրա ցանկությունը:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 13

Անկախ Ձեր ազգային պատկանելությունից՝ Դուք իրավունք ունեք ապաստանի դիմում ներկայացնել նույնիսկ այն դեպքում, երբ Հայաստան մուտք եք գործել ապօրինի, չունեք անձնագիր կամ ձեր ինքնությունը հաստատող այլ փաստաթուղթ: Ձեր ապաստանի դիմումը կընդունվի և Դուք կհաշվառվեք ՄՊԾ-ում որպես Հայաստանում ապաստան հայցող անձ:

Դուք կարող եք ՀՀ-ում դիմում ներկայացնել փախստականի կարգավիճակի համար և ստանալ կարգավիճակ նույնիսկ եթե լքել եք Սիրիան նախքան զինված հակամարտության սկսվելը, եթե չեք կարող վերադառնալ այնտեղ հակամարտության կամ այլ պատճառներով:

Ապաստան հայցողը վավեր ճամփորդական փաստաթուղթ կամ մուտքի վավեր թույլտվություն չունենալու դեպքում Սահմանապահ զորքերի կողմից կարող է պահվել այդ նպատակով ստեղծված հատուկ կացարանում մինչև 72 ժամ տևողությամբ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 46

Ի՞նչ կլինի, եթե ես վերադառնամ տուն

Եթե Դուք վերադառնաք տուն այնտեղ կրկին բնակվելու մտադրությամբ, Ձեր փախստականի կարգավիճակը կարող է դադարեցվել ՄՊԾ-ի կողմից:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 10

Եթե ապաստան հայցողը ճանաչվում է փախստական, ապա նա դրա մասին որոշումն ստանալուց հետո ազատում է կենտրոնում զբաղեցրած սենյակը:

Ապաստանի մերժում ստացած փախստականները լիազոր մարմնի գրավոր թույլտվությամբ կարող են շարունակել բնակությունը կենտրոնում մինչև ՀՀ տարածքը լքելը:

ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 19-ի N1440-Ն որոշում

Տրամադրվում է այդո՞ք ք ապաստան հայցողներին դրամական օգնություն ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում

Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին տրամադրվում է դրամական օգնության հետևյալ չափով՝ դիմումատուին՝ 20.000 դրամ, իսկ նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 15.000-ական դրամ:

ՀՀ կառավարության 2016թ. սեպտեմբերի 15-ի թիվ 951-Ն որոշում

Ի՞նչ արտոնություններ են սահմանված առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների համար

Եթե ապաստան հայցողն առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա է, ապա նա կենտրոնում տեղավորվում է առաջնահերթության կարգով: Կենտրոնում տեղավորելիս՝ կենտրոնի տնօրինությունը հաշվի է առնում երեխայի լավագույն շահերը, ինչպես նաև խորհրդակցում է նրա ներկայացուցչի հետ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1268-Ն որոշում

Ի՞նչ պատասխանատվություն է սահմանված ժամանակավոր տեղավորման կենտրոնում ներքին կարգապահական կանոնների և դրանց խախտման դեպքում

Կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները խախտած ապաստան հայցողը կենտրոնի տնօրենի կողմից գրավոր նախազգուշացվում է խախտման հետևանքների վերաբերյալ: Բնակության ներքին կարգապահական կանոնների երկու և ավելի անգամ խախտման դեպքում՝ ապաստան հայցողին տրված ուղեգիրը, կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, ուժը կորցրած է ճանաչվում լիազոր մարմնի կողմից:

Ապաստան հայցողին տրված ուղեգիրն ուժը կորցրած ճանաչվելու մասին ապաստան հայցողը գրավոր ծանուցվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ուղեգիրն ուժը կորցրած ճանաչվելու մասին տեղեկանալու օրվանից սկսած եռօրյա ժամկետում ապաստան հայցողն ազատում է զբաղեցրած սենյակը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1268-Ն որոշում

Ի՞նչ փաստաթուղթ է տրամադրվում ապաստան հայցող-ների

ՄՊԾ-ն յուրաքանչյուր ապաստան հայցողին և նրա ընտանիքի անդամներին (այդ թվում երեխաներին) ապաստանի հայց ներկայացնելուց հետո անվճար տրամադրում է անձը հաստատող վկայական:

Ապաստան հայցողների անձը հաստատող վկայականը տրամադրվում է երեք ամսով, և մինչև ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը այդ վկայականի վավերականության ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարաձգվում է երեքական ամսով:

Ընտանիքի մինչև 16 տարեկան անդամների մասին տեղեկությունները զետեղվում են ապաստանի հայց ներկայացրած իրենց ծնողների կամ խնամակալների անձը հաստատող վկայականներում:

Անձը հաստատող վկայականը հաստատում է ապաստան հայցողի օրինական բնակության փաստը և գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 29

Ինչպիսի՞ն է ապաստանի հայցի և փախստականի ճանաչման վերաբերյալ ընդունված որոշումների բողոքարկման ընթացակարգը

- Ապաստան հայցողները և փախստականներն իրավունք ունեն դատական կարգով բողոքարկելու ապաստանի հայցի առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի բացասական որոշումները՝ դրա մասին տեղեկա-

նալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում: 30 օրվա ընթացքում բողոք չներակայցնելու դեպքում որոշումը համարվում է վերջնական: ՄՊԾ-ի որոշումը կարող է բողոքարկվել երեք դատական աստիճաններում՝ ՀՀ վարչական դատարան, ՀՀ վարչական վերաքննիչ դատարան և ՀՀ Վճռաբեկ դատարան:

- Բողոքարկման ժամկետի բաց թողնելը հարգելի կարող է համարվել ապաստան հայցողից կամ փախստականից անկախ պատճառներով բողոքարկման ժամկետը բաց թողնելու դեպքում:
- Բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները) վերանալուց հետո ապաստան հայցողը 15 օրվա ընթացքում կարող է բողոք ներկայացնել դատարան, եթե ապաստանի հայցի առնչությամբ կայացված որոշման ընդունման մասին տեղեկանալու օրվանից սկսած երեք ամսից ավելի ժամանակ չի անցել:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 57

Ի՞նչ է փախստականի նույնականացման քարտը

Փախստականի նույնականացման քարտը փախստականի անձը և Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հաստատող փաստաթուղթ է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար:

Ոստիկանությունը Միգրացիոն պետական ծառայության որոշման հիման վրա փախստականներին, տրամադրում է փախստականի նույնականացման քարտ:

Մինչև 16 տարեկան փախստականին փախստականի նույնականացման քարտը տրամադրվում է երեք տարի, իսկ 16 տարին լրացած փախստականին՝ 10 տարի վավերականության ժամկետով:

Փախստականի նույնականացման քարտ ստանալու համար անձը ներկայացնում է՝

- 1) դիմում.
- 2) անձը հաստատող լուսանկարով որևէ փաստաթուղթ (առկայության դեպքում).
- 3) լիազոր մարմնի կողմից տրված՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը.
- 4) լիազոր մարմնի որոշումը տվյալ անձին փախստական ճանաչելու մասին.
- 5) պետական տուրքի վճարման անդորրագիր:

Փախստականի նույնականացման քարտը փոխանակելու համար անձը ներկայացնում է՝

- 1) դիմում.
- 2) փոխանակման ենթակա փախստականի նույնականացման քարտը.
- 3) պետական տուրքի վճարման անդորրագիր:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 30 և 58-րդ հոդվածի 1-ին մաս

Ի՞նչ է կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը

Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը փախստականի անձը հաստատող փաստաթուղթ է, որը նախատեսված է ՀՀ-ից դուրս գալու և ՀՀ վերադառնալու համար: Ոստիկանությունը ՀՀ-ում ապաստան ստացած փախստականներին տրա-

մադրում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ՝ նույնականացման քարտի հիման վրա: Մինչև 16 տարեկան փախստականներին կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը տրամադրվում է երեք տարի վավերականության ժամկետով, իսկ 16 տարին լրացած փախստականներին՝ 10 տարի վավերականության ժամկետով:

Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ ստանալու համար անձը ներկայացնում է՝

- 1) դիմում.
- 2) փախստականի նույնականացման քարտ.
- 3) պետական տուրքի վճարման անդորրագիր:

Մինչև 16 տարեկան երեխային փախստականի նույնականացման քարտ տրամադրվում է երեխայի ծնողներից մեկի կամ այլ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչն անձամբ չի կարող ներկայացնել դիմումը, ապա ներկայացվող դիմումի վրա նրա ստորագրության իսկությունը վավերացվում է նոտարական կարգով:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 30

Ի՞նչ կարգավիճակ են ձեռք բերում փախստականի ընտանիքի անդամները

Փախստական և ՀՀ-ում ապաստան ստացած են համարվում ստորև նշված անձինք, ովքեր ՀՀ-ում ապաստան ստացած փախստականի հետ բնակվում են համատեղ և չեն օգտվում (փախստականի քաղաքացիության երկրից տարբեր) որևէ այլ երկրի պաշտպանությունից.

- ՀՀ-ում ապաստան ստացած փախստականի ամուսինը,

- ՀՀ-ում ապաստան ստացած փախստականի մինչև 18 տարեկան զավակը,
- ՀՀ-ում ապաստան ստացած փախստականի այլ բարեկամները կամ նրա ամուսնու բարեկամները, եթե գտնվում են ՀՀ-ում ապաստան ստացած փախստականի խնամքի տակ,
- ՀՀ-ում ապաստան ստացած փախստականի խնամքի տակ գտնվող այլ անձը,
- ՀՀ-ում ապաստան ստացած փախստական երեխայի ծնողները, մինչև 18 տարեկան, ինչպես նաև 18-ից բարձր տարիքի անգործունակ հարազատ քույրերն ու եղբայրները:

ՀՀ-ում ապաստան ստացած փախստականը իրավունք ունի նաև ՀՀ տարածքում վերամիավորվելու օտարերկրյա պետությունում գտնվող՝ վերը նշված անձանց հետ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 7

Որո՞նք են ապաստան հայցողների իրավունքները ապաստանի հայցի մերժման դեպքում

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու նպատակով ստեղծվել է ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորելու կենտրոն: Կենտրոնում տեղավորվելու մասին ապաստան հայցողների դիմումի հիման վրա ՄՊԾ-ի կողմից նրանց տրվում է ուղեգիր: Ուղեգիրը տրվում է կենտրոնում ազատ սենյակների առկայության դեպքում: Ուղեգիր ստացած ապաստան հայցողներն, ինչպես նաև հայցողի ընտանիքի անդամները անհապաղ տեղավորվում են կենտրոնում:

Ապաստան հայցողները կենտրոնում բնակվում են մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում ըն-

դունվելը (ներառյալ մերժման որոշման բողոքարկման գործընթացի ավարտը):

Եթե ապաստան հայցողի դիմումը մերժվում է և նա վարչական կամ դատական կարգով չի բողոքարկում մերժման որոշումը, ապա նա որոշումն ստանալուց հետո կարող է շարունակել իր բնակությունը կենտրոնում՝ մինչև 30 օր ժամկետով: Ապաստանի մերժում ստացած փախստականները ՄՊԾ գրավոր թույլտվությամբ կարող են շարունակել բնակությունը կենտրոնում մինչև Հայաստանի Հանրապետության տարածքը լքելը:

Եթե ապաստան հայցողի դիմումը մերժվում է և նա բողոքարկում է մերժման որոշումը դատական կարգով, ապա նա և նրա ընտանիքի անդամներն իրավունք ունեն շարունակել իրենց բնակությունը կենտրոնում՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Ապաստան հայցողի անձը հաստատող վկայականի գործողության ժամկետը կերկարաձգվի ՄՊԾ-ի կողմից մինչև վերջին աստյանի դատարանի կողմից վերջնական որոշման կայացումը:

Եթե ապաստան հայցողի դիմումը մերժվում է և նա վարչական կամ դատական կարգով չի բողոքարկում մերժման որոշումը, ապա նա որոշումն ստանալուց հետո կարող է շարունակել իր բնակությունը կենտրոնում՝ մինչև 30 օր ժամկետով. 2

Հաշվի առնելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի պահանջները, ՄՊԾ-ի բացասական որոշումները կարող են բողոքարկվել այդ մասին տեղեկանալու օրվանից սկսած ոչ թե 30 օրյա, այլ 2 ամսյա ժամկետում:

ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշում

Հանրային կրթության իրավունք

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներն ու ապաստան ստացած փախստականներն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար կրթության իրավունք:

Ուսուցման մատչելիության, օտարերկրյա դպրոցական վկայագրերի, դիպլոմների ու գիտական աստիճանների ճանաչման, տուրքերից ու վճարումներից ազատման և կրթաթոշակների շնորհման հարցերում Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված

Տրամադրվում է արդյո՞ք փախստականներին և ապաստան հայցողներին անվճար իրավաբանական օգնություն

Ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն՝ համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդված

Որո՞նք են ապաստան հայցողների և ապաստան ստացած փախստականների հիմնական պարտականությունները

- Ապաստան հայցողները ՄՊԾ-ը պարտավոր են տրամադրել լիարժեք և ճիշտ տեղեկատվություն իրենց ապաստանի հայցի հիմքերի վերաբերյալ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 49

- Եթե ապաստան հայցողը ճանաչվում է փախստական, ապա նա դրա մասին որոշումն ստանալուց հետո պարտավոր է ազատել կենտրոնում զբաղեցրած սենյակը:

ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշում

Ապաստան հայցողները և փախստականներն ունեն Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ և պարտականություններ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 15

Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար կարող եք օգտվել հետևյալ հղումներից.

ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայություն (ՄՊԾ) ք.Երևան, Հր.Քոչարի 4, հեռ. 22-56-24, 22-56-20, <http://www.smsmta.am>

Տեղեկատվական գրքույկ ՀՀ-ում ապաստան հայցողների համար` <http://www.smsmta.am/up/brochure.PDF>

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ ք.Երևան, Պետրոս Ադամյան 14 փողոց, հեռ. 56- 02- 12, <http://www.un.am/am/UNHCR>

5. Կացության կարգավիճակի վերաբերյալ հարցեր

Որո՞նք են ՀՀ-ում կացության կարգավիճակ ձեռք բերելու հիմնական հետևանքները

Կացության կարգավիճակ ձեռք բերելու դեպքում ձեռք կբերեք ՀՀ քաղաքացիներին հավասար մի շարք իրավունքներ, ինչպես, օրինակ,

- աշխատանքի իրավունքը,
- հիմնական ընդհանուր կրթության իրավունքը,
- բժշկական օգնություն ստանալու իրավունքը,
- սոցիալական ապահովության իրավունքը,
- ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունքը:

Կացության կարգավիճակ ձեռք բերելու դեպքում Ձեզ չի տրամադրվի ճամփորդական փաստաթուղթ:

Դուք չեք ծառայի ՀՀ զինված ուժերում:

Դուք չեք կարողանա հող գնել որպես Ձեր սեփականություն:

Դուք չեք կարողանա մասնակցել համապետական ընտրության (Ազգային ժողովի):

Կացության կարգավիճակ ձեռք բերելու դեպքում ձեր ընտանիքի անդամները նույնպես կարող են այդ հիմքով ձեռք բերել կացության կարգավիճակ՝ իրենց դիմումի համաձայն:

Որո՞նք են ՀՀ-ում կացության կարգավիճակները

ՀՀ-ում կացության կարգավիճակները հետևյալն են.

1. Ժամանակավոր (տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ),

2. մշտական (տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ),
3. հատուկ (տրվում է տասը տարի ժամկետով: Այն կարող է տրվել մեկից ավելի անգամ):

ՀՀ ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերն են համապատասխանաբար ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը և հատուկ անձնագիրը:

Ժամանակավոր և մշտական կացության քարտի վավերականության ժամկետը երկարաձգելու մասին դիմումը անհրաժեշտ է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունն ներկայացնել ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածներ

Որո՞նք են ժամանակավոր կացության կարգավիճակ տալու հիմքերը և ժամկետները

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունի ՀՀ տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հետևյալ հանգամանքներից որևէ մեկը.

1. ուսումը,
2. աշխատանքի թույլտվության առկայությունը,
3. ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը,
4. ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը

կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը,

5. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,

6. ազգությամբ հայ լինելը:

Ուսման նպատակով ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը ներկայացնելու համար ՀՀ կառավարության կողմից կարող է սահմանվել ավելի կարճ ժամկետ:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 15

Որո՞նք են մշտական կացության կարգավիճակ տալու հիմքերը և ժամկետները

Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

1. Ապացուցում է.

- ՀՀ-ում ՀՀ քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը,
- ՀՀ-ում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և
- մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է ՀՀ-ում կամ

2. Ազգությամբ հայ է կամ ՀՀ-ում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է **5 տարի** ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ **5 տարով** երկարաձգելու հնարավորությամբ:

Ո՞ր մարմինն է կայացնում ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ տալու կամ մերժելու կամ երկարաձգելու մասին որոշումը և որքա՞ն ժամկետում

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը՝ դիմումը ներկայացնելու օրվանից 30-օրյա ժամկետում

Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի կացության կարգավիճակի և մշտական կացության քարտի վավերականության ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 15, 16

Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակի դիմումի հետ

1. դիմում-հարցաթերթիկ (լրացվում է տեղում),
2. 35 x 45 մմ չափսի երեք գունավոր լուսանկար,
3. անձնագիրը, անձնագրի պատճենը և անձնագրի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,
4. ՀՀ-ում կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր,
5. առողջական վիճակի մասին տեղեկանք.

6. եկեղեցական կառույցի կողմից տրված մկրտության մասին փաստաթուղթը:

ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 7-ի N134-Ն որոշում

ՀՀ-ում սիրիահայերը ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար **ազատված** են պետական տուրքի վճարումից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» ենթակետ

Որո՞նք են հատուկ կացության կարգավիճակ տալու հիմքերը

Հատուկ կացության կարգավիճակ տրվում է՝

1. ազգությամբ հայ օտարերկրացիների,
2. ՀՀ-ում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 18

Ո՞ր մարմինն է կայացնում հատուկ կացության կարգավիճակ տալու կամ մերժելու մասին որոշումը և որքա՞ն ժամկետում

Հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար դիմումի քննարկման կարգը, ժամկետները, դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

Հատուկ կացության կարգավիճակ տալու կամ մերժելու որոշում կայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը: Այդ որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 18

ՀՀ Նախագահի 2015 թ. ապրիլի 1-ի ՆՀ-255-Ն հրամանագրի N1 և N2 հավելվածներ

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հատուկ կացության կարգավիճակի դիմումի հետ ներկայացնելու համար

Հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, իսկ օտարերկրյան պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

- 1) Հայաստանի Հանրապետությունում հատուկ կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ լրացված դիմում-հարցաթերթիկ.
- 2) Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքով բնակվելը հավաստող փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագիր (վիզա), կացության քարտ, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, Հայաստանի Հանրապետություն առանց մուտքի վիզայի մուտք գործելու իրավունք ունեցող պետությունների քաղաքացիների համար՝ սահմանային վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից անձի՝ միջազգայնորեն ճանաչված՝ անձը հաստատող ճամփորդական փաստաթղթում Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու մասին կատարված նշումը (միայն Հայաստանի Հան-

րապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն դիմելու դեպքում)。

3) ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթերից որևէ մեկը՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1390-Ն որոշման N 4 հավելվածում նշված եկեղեցական կառույցների՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Հայ Ավետարանական եկեղեցու, Հայ Կաթողիկե եկեղեցու կողմից տրված մկրտության մասին փաստաթուղթ՝ հաստատված վերոնշյալ որոշմամբ նախատեսված կարգով, մկրտվածի կամ նրա ծնողի ազգությամբ հայ լինելու մասին նշումով,
- օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից տրված և ապոստիլով հաստատված կամ հյուպատոսական վավերացմամբ՝ ազգությամբ հայ լինելու մասին փաստաթուղթ,
- ազգությամբ հայ լինելու հանգամանքը հիմնավորող այլ փաստաթուղթ՝ հաստատված վերոնշյալ որոշմամբ նախատեսված կարգով,
- ծնողի (պապի, տատի, հարազատ քրոջ կամ եղբոր) ծննդյան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, որում առկա է ազգությամբ հայ լինելու վերաբերյալ նշում: Համահայր կամ համամայր, եղբոր կամ քրոջ ծննդյան վկայականը կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթն անձի համար կարող է հանդիսանալ ազգությունը հաստատող փաստաթուղթ, եթե եղբոր կամ քրոջ ազգությամբ հայ լինելը պայմանավորված է նրանց համատեղ ծնողի ազգությամբ。

- 4) Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն իրականացնելը հիմնավորող փաստաթուղթ (միայն ազգությամբ ոչ հայերի համար)։
- 5) անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ և դրա նուտարական կարգով վավերացված հայերեն թարգմանություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունքը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)։
- 6) 35 x 45 մմ չափսի վեց գունավոր լուսանկար։
- 7) օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիր։

ՀՀ Նախագահի 2015 թ. ապրիլի 1-ի Հ-255-Ն հրամանագրի N1 և N2 հավելվածներ

Ուլքե՞ր են ազատվում կացության կարգավիճակի համար վճարից

1. ազգությամբ հայ այն օտարերկրյա քաղաքացիները, որոնց ծագման երկիրն արտակարգ իրավիճակում է, ինչը սպառնալիք է քաղաքացիների կյանքի և առողջության համար, Հայկական ծագումը հաստատող փաստաթղթերի ցանկը տե՛ս բաժին 3-ում։
2. ՀՀ քաղաքացու մերձավոր ազգականները (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր),
3. մինչև 18 տարեկան անձինք,
4. փախստականի կարգավիճակ ստացած անձի՝ ՀՀ ժամանող մերձավոր ազգականները (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր)։

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված

Հնարավոր է բողոքարկել կացության կարգավիճակ ստանալու դիմումի մերժումը

Բացառությամբ հատուկ կացության կարգավիճակի, կացության կարգավիճակ ստանալու կամ երկարաձգելու համար ներկայացված դիմումի մերժումը օտարերկրացին կարող է բողոքարկել դատական կարգով: Եթե մինչև դատարանի կողմից գործի քննությունը կամ դատարանի կողմից կայացված որոշման ուժի մեջ մտնելը սպառվում է օտարերկրացու մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակի վավերականության ժամկետը, ապա ՀՀ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը նրան տալիս է ՀՀ-ում ժամանակավոր մնալու թույլտվություն՝ մինչև դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը: Եթե կացության կարգավիճակ ստանալը կամ երկարաձգելը մերժելու մասին որոշումը դատարանը թողնում է ուժի մեջ, ապա օտարերկրացին պարտավոր է դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, կամավոր հեռանալ ՀՀ տարածքից: Կացության կարգավիճակ տալը մերժելու դեպքում օտարերկրացին մեկ տարի հետո կրկին կարող է դիմել կացության կարգավիճակ ստանալու համար, ինչի մասին նշում է կատարվում մերժման մասին որոշման մեջ:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 20

Հավելյալ տեղեկությունների համար դիմել. ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն, հասցե՝ ք.Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք, թեժ գիծ՝ (010) 37-02-64:

6. Ծննդի պետական գրանցման վերաբերյալ հարցեր

Կգրանցվի՞ արդյոք Սիրիայից տեղահանված անձանցից ՀՀ-ում ծնված երեխաների ծնունդը

ՀՀ-ում ծնված բոլոր երեխաների ծնունդը պետք է գրանցվի՝ անկախ ծնողների ունեցած կարգավիճակից կամ դրա բացակայությունից:

Ո՞ր մարմինն է իրականացնում երեխայի ծննդի պետական գրանցումը

Ծննդի պետական գրանցումն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) մարմինը: Դուք պետք է դիմեք երեխայի ծննդի վայրի (համայնքի, Երևան քաղաքում՝ վարչական շրջանի) կամ ծնողների (ծնողներից մեկի) բնակության վայրի ՔԿԱԳ մարմին:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 15

Ե՞րբ է անհրաժեշտ երեխայի ծննդի մասին հայտարարություն ներկայացնել համապատասխան ՔԿԱԳ մարմին

Երեխայի ծննդի մասին գրավոր հայտարարությունը ՔԿԱԳ մարմնին տրվում է ոչ ուշ, քան երեխայի ծննդի օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Երեխայի ծննդի ուշ գրանցումը ևս հնարավոր է՝ օրենքով սահմանված կարգով: Մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից ծննդյան մասին տրված սահմանված ձևի փաստաթղթի առկայության դեպքում իրականացվում է ծնողների (ծնողներից մեկի) կամ երե-

խայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) կամ լիազորված անձի կամ շահագրգիռ այլ անձանց գրավոր դիմումի հիման վրա: Երեխայի չափահաս դառնալուց հետո նրա ծննդի պետական գրանցումն իրականացվում է իր դիմումի հիման վրա:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 16, 21

Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել երեխայի ծննդի պետական գրանցման համար

Երեխայի ծննդի մասին հայտարարության հետ պետք է ներկայացվի՝

- երեխայի ծնունդը հաստատող փաստաթուղթ (տես նաև ստորև),
- ծնողների (ծնողներից մեկի) կամ դիմողի անձը հաստատող փաստաթուղթ (օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում նաև անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթի՝ նոտարի կողմից վավերացված հայերեն թարգմանությունը),
- երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք համարվող փաստաթղթեր (օրինակ՝ ամուսնության վկայական, հայրության ճանաչման մասին փաստաթուղթ):

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 7 և 16

Որո՞նք են երեխայի ծնունդը հաստատող փաստաթղթերը Ծննդի պետական գրանցման հիմքերն են՝

1. ծննդյան մասին փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը,
2. ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որը ցուցաբերել է բժշկական օգնություն ծննդի ժամանակ,
3. ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկի կողմից՝ բժշկական կազմակերպությունից դուրս ծննդի դեպքում,
4. ծննդյան մասին սահմանված ձևի գրավոր հայտարարությունը՝ տրված ծննդի ժամանակ ներկա գտնված անձի (անձանց) կողմից, և երեխայի առողջության մասին բժշկական կազմակերպության տված տեղեկանքը՝ բժշկական կազմակերպությունից դուրս և առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում:

Եթե Ձեզ մոտ առկա չէ վերոնշյալ փաստաթղթերից որևէ մեկը, ապա երեխայի ծննդի գրանցումը հնարավոր կլինի կատարել միայն ծննդաբերության փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 14

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն, ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 հեռ. (010)59-41-61 կայքէջ՝ www.moj.am:

7. Ամուսնության (ամուսնալուծության) պետական գրանցման վերաբերյալ հարցեր

Ո՞ր տարիքից կարելի է ամուսնություն գրանցել ՀՀ-ում

Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը:

Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի՝ նոտարական կարգով հաստատված կամ ՔԿԱԳ մարմնում տրված գրավոր համաձայնությունը:

Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի՝ նոտարական կարգով հաստատված կամ ՔԿԱԳ մարմնում տրված գրավոր համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:

Ո՞ր մարմինն է կատարում ամուսնության պետական գրանցումը

Ամուսնության պետական գրանցումը կատարում է՝

- ամուսնացողներից մեկի հաշվառման վայրի (բնակության վայրի՝ համապատասխան տեղեկանքի առկայության դեպքում) Քաղաքացիական կացության ակտերի գործակալության (ՔԿԱԳ) տարածքային մարմինը կամ
- ՀՀ արդարադատության նախարարության համակարգում գտնվող՝ ամուսնության և ծննդի հանդիսավոր գրանցման պալատը:

- ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների ամուսնությունը միմյանց կամ ՀՀ քաղաքացիների հետ գրանցվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության պետի թույլտվության հիման վրա՝ ՔԿԱԳ տարածքային մարմնում:

Առանց մշտական հաշվառման ապրող քաղաքացիների ամուսնության գրանցումը կատարվում է ամուսնացող քաղաքացու ժամանակավոր բնակության վայրի ՔԿԱԳ մարմնի կողմից: Այդ դեպքում քաղաքացին պետք է ներկայացնի տեղեկանք ժամանակավոր բնակության վայրից՝ տրված իրավասու մարմինների կողմից:

Ի՞նչն է հանդիսանում ամուսնության գրանցման հիմքը

Ամուսնության պետական գրանցման համար հիմք է համարվում ամուսնացող անձանց համատեղ դիմումը:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 24

Ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում օտարերկրացու մասնակցությամբ ամուսնության պետական գրանցման համար

Ամուսնության պետական գրանցման համար ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալություն են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

- ամուսնացող անձանց համատեղ գրավոր դիմումը.

- ամուսնության բացակայության մասին տեղեկանք՝ օտարերկրյա իրավասու մարմինների կողմից» Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961թ. Հաագայի կոնվենցիայով սահմանված ապոստիլով, հաստատմամբ՝ նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ (եթե պետությունը կոնվենցիայի անդամ չէ, փաստաթղթերը ենթակա են հյուպատոսական վավերացման, իսկ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված առանձին երկրների պարագայում որևէ հաստատում անհրաժեշտ չէ):
- նախկին ամուսնության դադարումը հաստատող փաստաթուղթ, եթե անձը նախկինում գտնվել է ամուսնության մեջ՝ ստորագրությունների վավերականության ապոստիլով հաստատմամբ (եթե պետությունը «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961թ. Հաագայի կոնվենցիայի անդամ չէ, փաստաթղթերը ենթակա են հյուպատոսական վավերացման), նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ (օրինակ՝ մահվան վկայական, ամուսնալուծության վճիռ, ամուսնալուծության վկայական, տեղեկանք և այլն)։
- անձնագրի պատճենը՝ ՀՀ նոտարական թարգմանությամբ հաստատված:

Որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը

Ամուսնության գրանցման համար գանձվում է պետական տուրք՝ 1000 ՀՀ դրամի չափով:

Ի՞նչ ժամկետում է կատարվում ամուսնության պետական գրանցումը

Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է ՔԿԱԳ մարմին ամուսնացող անձանց ներկայացրած համատեղ դիմումում նշված օրը, սակայն ոչ շուտ, քան դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը և ոչ ուշ, քան երեք ամիսը: Ամուսնացող անձանց համատեղ դիմումի հիման վրա ամուսնության պետական գրանցման 10-օրյա ժամկետը կարող է կրճատվել հարգելի պատճառների առկայության դեպքում: Ամուսնության գրանցման ժամկետը կրճատելու համար հիմք համարվող հարգելի պատճառներ են՝

- 1) ամուսնացող անձանց համատեղ երեխա (ներ) ունենալը.
- 2) ամուսնացող կնոջ հղիությունը (առնվազն 12 շաբաթական).
- 3) ամուսնացող անձի գորակոչվելը ժամկետային զինվորական ծառայության.
- 4) ամուսնացող անձի՝ ՀՀ զինված ուժերում ծառայության կամ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելը.
- 5) ՀՀ-ում ամուսնացող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ միմյանց կամ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ քաղաքացիների հետ ամուսնության դեպքում ամուսնացողների կամ նրանցից մեկի՝ ՀՀ տարածքից երկարատև ժամանակով մեկնելու (բացակայելու) դեպքում.
- 6) ամուսնացող անձի ծանր հիվանդությունը:

Ինչպի՞սի իրավական հետևանքներ է առաջացնում ամուսնության պետական գրանցումը

ՀՀ-ում ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում գրանցված ամուսնությունը: ՀՀ-ում փաստացի համատեղ բնակությունը և ՀՀ-ում եկեղեցական կարգով ամուսնությունը ամուսինների համար չեն առաջացնում այն իրավական հետևանքները, որոնք ամուսինների համար նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ գրանցված ամուսնության պարագայում:

Ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201 հոդված

Որո՞նք են ամուսնալուծության պետական գրանցման հիմքերը

1. ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմիններում ամուսինների միջև փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար,
2. ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով,
3. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքերում (երբ բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը, երբ ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ա-

մուսնալուծությունը ՔԿԱԳ մարմիններում կատարելուց, կամ երբ ամուսինները ցանկանում են ամուսնությունը լուծել դատական կարգով՝ փոխադարձ համաձայնությամբ):

Ամուսնալուծությունից հետո ինչ կարգով է լուծվում ազգանվան խնդիրը

Ամուսնության պետական գրանցման ժամանակ իր ազգանունը փոխած ամուսինն իրավասու է ամուսնալուծությունից հետո պահպանել այդ ազգանունը կամ իր ցանկությամբ ամուսնալուծության պետական գրանցումից հետո ստանալ իր մինչամուսնական ազգանունը:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն, ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. (010)59-41-61 կայքէջ՝ www.moj.am:

8. Մահվան պետական գրանցման վերաբերյալ հարցեր

Որո՞նք են մահվան պետական գրանցման հիմքերը

1. բժշկական կազմակերպության կամ բժշկի տված՝ մահը հաստատող սահմանված ձևի փաստաթուղթը,
2. անձի մահվան փաստի հաստատման կամ անձին մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Ո՞ր մարմինն է կատարում մահվան պետական գրանցումը

1. մահացածի վերջին բնակության վայրի,

2. մահը վրա հասնելու վայրի,
3. մահացածի դիակի հայտնաբերման կամ
4. մահվան մասին փաստաթուղթ տված կազմակերպության գտնվելու վայրի ՔԿԱԳ մարմինը:

Երևան քաղաքում մահվան գրանցումը կատարվում է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության Երևանի հատուկ սպասարկման տարածքային բաժնում (հասցե՝ ք. Երևան, Էրեբունի փ. 6/1, հեռ (+374 10 43-98-16)

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ մահվան պետական գրանցման համար

Մահվան պետական գրանցման պետք է ներկայացվեն՝

1. դիմում
2. բժշկական կազմակերպության կամ բժշկի տված՝ մահը հաստատող սահմանված ձևի փաստաթուղթը,
3. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը, եթե անձի մահվան փաստը հաստատվել է, կամ անձը մահացած է ճանաչվել դատական կարգով:

Մահացածի անձը հաստատող փաստաթուղթը չհանձնելն արգելք չի հանդիսանում մահը գրանցելու համար:

Ի՞նչ ժամկետում է կատարվում մահվան պետական գրանցումը

Մահվան գրանցումը կատարվում է ՔԿԱԳ մարմին դիմումը ներկայացնելու օրը:

Որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը

Մահվան պետական գրանցման համար պետական տուրք չի գանձվում:

9. Զինվորական ծառայության վերաբերյալ հարցեր

Ի՞նչ է զինվորական ծառայությունը

Զինվորական ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության հատուկ տեսակ է: Կա զինվորական ծառայության երկու տեսակ՝ ժամկետային և պահեստագորային:

Ո՞րն է ժամկետային զինվորական ծառայությունը

Ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայությունից:

1. **Պարտադիր զինվորական ծառայություն** է համարվում զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված շարքային ու սպայական կազմերի, ինչպես նաև ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների զինվորական ծառայությունը: Զինվորական ծառայությունը շարքային կազմի համար 24 ամիս է, իսկ պահեստագործի սպաների համար՝ 2-3 տարի:

2. **Պայմանագրային զինվորական ծառայություն** է համարվում կամավոր հիմունքներով զինվորական ծառայությունը, որը սպայական և ենթասպայական կազմի համար 3-5 տարի է, իսկ շարքային կազմի համար՝ 2-3 տարի:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի հոդված 4

Երկքաղաքացիության դեպքում քաղաքացիան արդյո՞ք համարվում է զինապարտ

ՀՀ քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, ե-

թե մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն: Այլ պետության քաղաքացիություն ընդունած ՀՀ քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե ոչ:

Երկքաղաքացին չի ազատվում զորահավաքից և վարժական հավաքից:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի հոդված 3՝

Ո՞րն է ՀՀ-ում զինապարտության տարիքը

Զինապարտության տարիքը ՀՀ-ում 18-27 տարեկանն է:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի հոդված 11

Ովքե՞ր կարող են ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է՝

1. Հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար (զինծառայողների գրանցման ցուցակից հանելու ձևով) ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվառումից, կամ խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հաշվառելով պահեստազորում,
2. այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) գոհվել (մահացել) է ՀՀ պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական

- պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է,
3. քաղաքացիները, ովքեր ազատվում են ծառայությունից առանձնահատուկ հանգամանքներում՝ ՀՀ կառավարության որոշմամբ,
 4. մինչև ՀՀ քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին,
 5. գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի հոդված 12

Հավելյալ տեղեկությունների համար դիմել. ՀՀ պաշտպանության նախարարություն, հասցե՝ ք.Երևան, Բագրևանդի 5, հեռ.՝ (010) 294699

10. Սոցիալական իրավունքների վերաբերվող հարցեր

10.1. Կրթության իրավունքի վերաբերյալ հարցեր

Ո՞վ ունի ՀՀ-ում կրթության իրավունք, և ո՞րն է դպրոց հաճախելու տարիքը

ՀՀ-ում յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլոր երեխաների համար:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք:

ՀՀ-ում ընդհանուր կրթությունն սկսվում է վեց տարեկանից և իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

1. տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ),
2. միջին դպրոց (5-9-րդ դասարաններ),
3. ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):

Ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում հանրակրթական դպրոց ընդունվելու համար

1. դիմում,
2. 2 լուսանկար,
3. երեխայի ծննդյան վկայականի պատճենը,
4. տեղեկանք երեխայի առողջության մասին (սպասարկող բուժհիմնարկից),
5. դպրոցից դպրոց աշակերտի փոխադրման թերթիկը՝ հաստատված տվյալ դպրոցի տնօրենի կողմից (առաջինից բարձր դասարաններ ընդունվելու համար),
6. աշակերտի անձնական գործը՝ հաստատված տվյալ դպրոցի տնօրենի կողմից (առաջինից բարձր դասարաններ ընդունվելու համար):

Եթե Ձեզ մոտ առկա չէ այս փաստաթղթերից որևէ մեկը, ապա խնդրում ենք դիմել Երևանի քաղաքապետարանի (մար-

գերում՝ մարգալետարանների) երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ կամ սույն ձեռնարկի հավելված 2-ում թվարկված կազմակերպություններ՝ խորհրդատվության համար: Պետական հանրակրթական դպրոցների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:

«Կրթության մասին» ՀՀ օրենք ՀՕ-297 հոդված 6 մաս 4

Ինչպիսի՞ բարձրագույն ուսումնական հաստատություններ կան ՀՀ-ում

- համալսարան,
- ինստիտուտ,
- ակադեմիա,
- կոնսերվատորիա:

Ինչպիսի՞ որակավորման աստիճաններ կան ՀՀ-ում

- բակալավր,
- դիպլոմավորված մասնագետ,
- մագիստրոս:

ՀՀ բուհ-ի քննությունների անցկացման համար որքա՞ն գումար է վճարվում

Քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 դրամ: Անկախ քննությանը մասնակցելուց և արդյունքից՝ վճարած գումարը չի վերադարձվում:

Ուլքե՞ր են ազատվում ՀՀ բուհ-ի քննությունների անցկացման համար վճարից

- պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվածները,
- 1-ին ու 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
- ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զին-ծառայողների երեխաները,
- ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան անձինք:

Ի՞նչ արտոնություններ կան ՀՀ բուհեր ընդունվող սիրիահայ դիմորդների համար

Յուրաքանչյուր տարի սփյուռքահայ դիմորդները կարող են դիմել ՀՀ բուհերի ցանկացած ֆակուլտետի նախապատրաստական բաժին: Այդ նպատակով նրանք պետք է հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում փաստաթղթեր ներկայացնեն ՀՀ կրթության և գիտության նախարարություն կամ օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ՝ հայոց լեզուն և մասնագիտական առարկաները ուսումնասիրելու նպատակով և տարեվերջում, քննությունները բարեհաջող հանձնելով, շարունակել իր ուսումը, կամ անցնել հարցազրույց ընդունելության համար նախատեսված առարկաներից և բավարար գիտելիքներ-

րի առկայության դեպքում անմիջապես ընդունվել համապատասխան ֆակուլտետի 1-ին կուրս:

Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնեք

1. դիմում ՀՀ կրթության և գիտության նախարարի անունով, որում պետք է նշված լինի ընտրած բուհը և մասնագիտությունը,
2. անձնագրի պատճենը,
3. ծննդյան վկայականի պատճենը՝ հայերեն (ռուսերեն) թարգմանությամբ և նոտարի կողմից հաստատված,
4. կրթության վկայականի պատճենը՝ հայերեն (ռուսերեն) թարգմանությամբ և նոտարի կողմից հաստատված՝ նշելով ուսումնասիրած առարկաները և հանձնած քննությունները,
5. տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին,
6. տեղեկանք ՁԻԱՀ-ի (AIDS) վերաբերյալ,
7. լուսանկար (4x5սմ չափսի՝ 6 հատ):

Հնարավո՞ր է արդյոք ՀՀ բուհեր սիրիահայ դիմորդների ընդունելությունը անվճար հիմունքներով

Ինչպես բոլոր սփյուռքահայերը, այնպես էլ սիրիահայ դիմորդը կարող է ընդունվել պետական պատվերով (անվճար)՝

- եթե ընդունելության քննությունների արդյունքում բարձր միավորներ է հավաքում,
- եթե ընդունելության հնձնաժողովն օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի շրջանակներում պետպատվերի բաշխում է կատարում:

Մփյուռքահայերին պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով ընդունելության տեղերի բաշխման ժամանակ նախապատվությունը տրվում է սփյուռքի համար առաջնային համարվող հայագիտական, մանկավարժական և արվեստի բնագավառի մասնագիտություններին: Մփյուռքահայերին պետության կողմից տրամադրվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության տեղերի բաշխումն իրականացնում է նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվող հանձնաժողովի կողմից:

Մփյուռքահայերին պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով ընդունելության տեղերի բաշխման ժամանակ նախապատվությունը տրվում է սփյուռքի համար առաջնային բարձրագույն ուսումնական հաստատությունում և տվյալ մասնագիտության գծով ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար:

Հնարավոր է արդյոք սիրիահայ ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում

2012 թվականից սկսած յուրաքանչյուր տարի սիրիահայ ուսանողների ուսման վարձի փոխհատուցման համար ֆինանսական միջոցներ են հատկացվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, ինչպես նաև ֆինանսական օգնություն է տրամադրում «Գալուստ Կիլպենկեան» հիմնարկություն:

նը, «Հայաստան» համահայկական հիմնադրամը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:

Այսպես, 2016թ. հոկտեմբերի 27-ի N 1188-Ն որոշմամբ սիրիահայ ուսանողների 2016-2017 թվականների ուսումնական տարվա ուսման վարձերի մասնակի փոխհատուցման համար պետական բյուջեից հատկացվել է 20.000.000 ՀՀ դրամ, իսկ մնացած մասը տրամադրել են «Գալուստ Կիլպէնկեան» հիմնարկությունը և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:

Ինչ է նպատակային ուսուցումը

Նպատակային ուսուցում՝ մասնագիտական կրթական ծրագրերով պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառները, ինչպես նաև ՀՀ տարածաշրջանները, այդ թվում՝ սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերը, համապատասխան որակավորմամբ մասնագետներով ապահովելու նպատակով իրականացվող ուսուցումն է:

Ովքե՞ր կարող են դիմել նպատակային ուսուցման համար.

Նպատակային ուսուցման համար կարող են դիմել ՀՀ քաղաքացիները, որոնց համար պետությունը երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է հետևյալ պայմանը. **ուսանողն ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով** ՀՀ կառավարության սահմանած կարգով գործուղ-

վում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում: **Այս պայմանը չկատարելու դեպքում** շրջանավարտը ՀՀ կառավարության սահմանած կարգով և ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար ՀՀ պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի և պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ կրթության և գիտության նախարարություն, հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3 Գառավարական տուն 2, հեռ.՝ (010) 52-06-32, թեժ գիծ՝ (010) 52-73-43:

10.2. Աշխատանքի ընտրության վերաբերյալ հարցեր

ՀՀ-ում յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

Աշխատանքային իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը հավասարապես ճանաչվում է ՀՀ բոլոր քաղաքացիների համար: Օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք ՀՀ-ում ունեն այնպիսի աշխատանքի իրավունք, ինչպիսին ՀՀ քաղաքացիները:

Ի՞նչ է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը

Դա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առանձնացված ստորաբաժանում է, որի խնդիրն է անվճար կազմակերպել:

- աշխատանքի տեղավորում,
- մասնագիտական ուսուցման դասընթացներ,
- աշխատանքի տոնավաճառ:

Ո՞վ կարող է դիմել զբաղվածության պետական ծառայություն, և ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հաշվառվելու համար

Յուրաքանչյուր աշխատանք փնտրող անձ՝ ներկայացնելով

1. անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ,
2. հանրային ծառայությունների համարանիշը կամ այն չունենալու մասին տեղեկանքը,
3. կրթություն ունեցողները՝ կրթության մասին փաստաթուղթը:

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված անձին գործազուրկի կարգավիճակ տրամադրելու համար

1. տեղեկանք կենսաթոշակ չստանալու մասին (սոցիալական ծառայության տարածքային մարմնից),
2. ապահովագրական ստաժը հաստատող փաստաթուղթ,
3. զինվորական գրքույկ (զինվորական ծառայություն անցած անձինք),
4. կրթության մասին փաստաթուղթ (կրթություն ունեցողները),
5. տեղեկանք փաստացի բնակության վայրի մասին (համատիրությունից),

6. տեղեկանք՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների կատարման կամ աշխատավարձ ստանալու ժամկետների մասին,
7. տեղեկանք աշխատանք փնտրող անձի անվամբ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականության կամ վարձակալության իրավունքի բացակայության մասին (անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից):

Աշխատանք փնտրող անձին տարածքային կենտրոնի կողմից գործազուրկի կարգավիճակ տրվում է, եթե ապահովված են հետևյալ պայմանները՝

1. չի լրացել նրա տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը՝ 63 տարին.
2. որևէ գործատուի մոտ վարձու աշխատանքային գործունեությամբ զբաղված չէ.
3. քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ չի մատուցում կամ աշխատանքներ չի կատարում.
4. զբաղված չէ անհատ ձեռնարկատիրական և նոտարի գործունեությամբ.
5. արտոնագրային վճարվճարողի գործունեությամբ զբաղված չէ.
6. չի գտնվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ.
7. ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցման մեջ ընդգրկված չէ,
8. պատրաստակամ է անցնելու հարմար աշխատանքի,

9. որպես աշխատանք փնտրող հաշվառված է տարածքային կենտրոնում:

Գործազուրկի կարգավիճակը տրամադրվում է անհրաժշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն, հասցե՝ ք. Երևան, Կ. Ուլենցու 68, 5-րդ հարկ, հեռ.՝ (010) 280619, թեժ գիծ 0800-01020

Ինչպե՞ս են ծագում աշխատանքային հարաբերությունները

1. Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են գրավոր աշխատանքային պայմանագրի կնքմամբ
2. աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով

Ի՞նչ բովանդակություն ունեն վերոնշյալ փաստաթղթերը

Աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում, աշխատանքային պայմանագրում նշվում են՝

1. անհատական իրավական ակտն ընդունելու, աշխատանքային պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը,
2. աշխատողի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը,

3. կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը,
4. կառուցվածքային ստորաբաժանումը (դրա առկայության դեպքում),
5. աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը,
6. պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները,
7. հիմնական աշխատավարձի չափը և (կամ) այն որոշելու ձևը,
8. աշխատողներին սահմանված կարգով տրվող հավելումները, հավելվածները, լրավածները և այլն,
9. անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը (անհրաժեշտության դեպքում),
10. փորձաշրջան սահմանելու դեպքում՝ փորձաշրջանի տևողությունը և պայմանները,
11. աշխատաժամանակի ռեժիմը՝ աշխատաժամանակի նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ կամ աշխատաժամանակի կրճատ տևողություն կամ աշխատաժամանակի գումարային հաշվարկ,
12. ամենամյա արձակուրդի տեսակը (նվազագույն, լրացուցիչ, երկարացված) և տևողությունը,
13. իրավական ակտը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը:

Ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում աշխատանքի ընդունման համար

Աշխատանքի ընդունման համար անհրաժեշտ է գործատուին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը

1. անձը հաստատող փաստաթուղթ,
2. սոցիալական ապահովության քարտ կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշ կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանք,
3. կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, եթե աշխատանքային օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքը կապված է որոշակի կրթության կամ մասնագիտական պատրաստվածության հետ,
4. տեղեկանք առողջական վիճակի մասին (սանիտարական գրքույկ), եթե աշխատանքային պայմանագիրը կնքվում է այնպիսի աշխատանքների համար, որոնք պահանջում են սկզբնական և պարբերական բժշկական զննություն, ինչպես նաև մինչև տասնութ տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելու ժամանակ: Այդպիսի աշխատանքների ցանկը և տեղեկանքի (սանիտարական գրքույկի) ձևը սահմանում է ՀՀ կառավարությունը,
5. ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի կամ խնամակալի գրավոր համաձայնությունը, եթե աշխատանքի է ընդունվում մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացին,
6. օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

Աշխատանքի ընդունելիս արգելվում է պահանջել այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

10.3. Բժշկական օգնության վերաբերյալ հարցեր

Ո՞վ ունի բժշկական օգնության իրավունք ՀՀ-ում

Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք, ներառյալ օտարերկրացին, ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են Առողջապահության նախարարի՝ 18.11.13թ. N 71-Ն հրամանով, որը կարգավորում է 18 տարեկան և բարձր տարիքի բնակչության խմբերին պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ առողջապահության նախարարություն, հասցե՝

ք.Երևան, Հանրապետության հրապարակ,

Կառավարական տուն 3,

հեռ.՝ (010) 54-40-27, (010) 54-40-28,

թեժ գիծ՝ (010)52-88-72:

10.4. Նպաստների վերաբերյալ հարցեր

Ուլքե՞ր իրավունք ունեն ստանալու պետական նպաստներ

1. ՀՀ քաղաքացիները,
2. ՀՀ-ում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները,
3. ՀՀ-ում բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք,
4. ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք:
«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 2

Որո՞նք են պետական նպաստների տեսակները

1. ընտանեկան նպաստը.
2. սոցիալական նպաստը.
3. հրատապ օգնությունը.
4. երեխայի ծննդյան միանվագ նպաստը.
5. մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը.
6. ժամանակավոր անաշխատունակության նպաստը.
7. մայրության նպաստը.
8. ծերության նպաստը.
9. հաշմանդամության նպաստը.
10. կերակրողին կորցնելու դեպքում նպաստը.
11. թաղման նպաստը:
«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 5

Ո՞վ կարող է օգտվել ընտանեկան նպաստից

Ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, 30.00 -ից բարձր անապահովության միավոր ունեցող,

մինչև 18 տարեկան անդամ ունեցող ընտանիքը: Ընտանեկան նպաստի ամսական բազային չափը կազմում է 18000 ՀՀ դրամ:

*«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 13,
ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 26-ի N 37-Ն որոշում*

Ո՞վ կարող է օգտվել սոցիալական նպաստից

Սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, 30.00-ից բարձր անապահովության միավոր ունեցող, մինչև 18 տարեկան անդամ չունեցող ընտանիքը: Սոցիալական նպաստի ամսական չափը կազմում է 18000 ՀՀ դրամ:

*«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 16,
ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 26-ի N 37-Ն որոշում*

Ո՞վ ունի հրատապ օգնություն ստանալու իրավունք

Միանվագ հրատապ օգնության իրավունք ունի այն ընտանիքը, որը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստի իրավունք

- 1) ընտանիքում երեխայի ծննդյան դեպքում.
- 2) ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում.
- 3) ընտանիքի անդամի մահվան դեպքում:

Եռամսյակային հրատապ օգնությունը տրամադրվում է անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 18

Որո՞նք են հրատապ օգնության չափերը

Միանվագ հրատապ օգնության չափերն են՝

1. երեխայի ծննդյան դեպքում՝ 50000 դրամ,
 2. երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու դեպքում, 25000 դրամ,
 3. ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 50000 դրամ.
- Եռամսյակային հրատապ օգնության ամսական չափը 18000 դրամ է:

ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 26-ի N 37-Ն որոշում

Որոշք են երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերը

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 1-ին և 2-րդ երեխաների համար կազմում է 50.000 ՀՀ դրամ, ընտանիքում ծնված 3-րդ և 4-րդ երեխաների համար՝ 1.000.000 ՀՀ դրամ, իսկ 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 1.500.000 ՀՀ դրամ:

Երրորդ և հաջորդ երեխաներին միանվագ նպաստ վճարելու համար նոր ծնված երեխայի անունով բացվում է պետական աջակցության հաշիվ, որին փոխանցվում է նպաստի մի մասը: Պետական աջակցության հաշվին 3-րդ և 4-րդ երեխաների համար փոխանցվում է 500.000 ՀՀ դրամ, իսկ 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 1.000.000 ՀՀ դրամ:

Հաշվետերն իրավունք ունի առանց սահմանափակումների տնօրինելու ընտանեկան դրամագլուխը 18 տարին լրանալուց հետո: Մինչև երեխայի 18 տարին լրանալը այդ հաշիվը տնօրինում է երեխայի հետ նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) օրինական ներկայացուցիչը (ծնողը, խնամակալը, որդեգրողը)՝ բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններով և կարգով անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով:

ՀՀ կառավարության 2014թ. մարտի 6-ի N 275-Ն որոշում

Ո՞վ կարող է օգտվել մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստից

Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստանալու իրավունք ունի երկու ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը, ով գտնվում է երեխայի խնամքի արձակուրդում ՀՀ աշխատանքային օրենսգրքին համապատասխան՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը: Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի ամսական չափը կազմում է 18000 ՀՀ դրամ:

*Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 23,
ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 26-ի N 37-Ն որոշում*

Որո՞նք են ժամանակավոր անաշխատունակության նպաստի տեսակները

Ժամանակավոր անաշխատունակության նպաստի միջոցով մասնակիորեն փոխհատուցվում է վարձու աշխատող և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձանց ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստի տեսակներն են՝

1. հիվանդության (վնասվածքի) պատճառով տրվող նպաստ,
2. պրոթեզավորման պատճառով տրվող նպաստ,
3. առողջաբանային բուժման անհրաժեշտության պատճառով տրվող նպաստ,
4. ընտանիքի անդամի հիվանդության (վնասվածքի) պատճառով տրվող նպաստ:

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենք, հոդված 3

Ո՞վ կարող է օգտվել մայրության նպաստից

Մայրության նպաստի միջոցով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի (արձակուրդի իրավունք ունենալու) ժամանակահատվածում մասնակիորեն կամ ամբողջությամբ փոխհատուցվում է վարձու աշխատող և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձանց հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ:

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենք, հոդված 3

Ո՞վ կարող է օգտվել ծերության նպաստից

Ծերության նպաստի իրավունք ունի կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող անձը՝ 65 տարին լրանալու դեպքում: Ծերության նպաստի իրավունք ունեցող անձը նպաստ նշանակելու համար կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ իր հայեցողությամբ: Ծերության նպաստը նշանակվում է ցմահ: Ծերության նպաստի չափը կազմում է 16000 ՀՀ դրամ:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 29,

ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի N1489-Ն որոշում

Ո՞վ կարող է օգտվել հաշմանդամության նպաստից

Հաշմանդամության նպաստը նշանակվում է ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող հաշմանդամին, ինչպես նաև հաշմանդամ երեխա ճանաչված անձին: Հաշմանդամության նպաստը սահմանվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Որո՞նք են հաշմանդամության նպաստի չափերը

Հաշմանդամության սոցիալական նպաստի ամսական չափերն են.

- առաջին խմբի հաշմանդամի համար՝ 21500 դրամ,
- երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 19000 դրամ,
- երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 16000 դրամ:

ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի N1489-Ն որոշում

Ո՞վ ունի կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունք

Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունի մահացած կերակրողի՝ կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող՝

1. 18 տարին չլրացած երեխան՝ մինչև 18 տարին լրանալը.
2. առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակը՝ մինչև 23 տարին լրանալը.
3. ամուսինը կամ խնամակալ ճանաչված անձը՝ եթե նա զբաղված է մահացած կերակրողի 14 տարին չլրացած՝ նպաստի իրավունք ունեցող երեխայի խնամքով, երեխայի

հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում)
և չի աշխատում:

Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը 16000 ՀՀ
դրամ է:

*«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 31,
ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի N1489-Ն
ընդունված*

Ո՞վ կարող է օգտվել թաղման նպաստից

Նպաստառուի մահվան կամ հաշմանդամության նպաստի
իրավունք ունեցող անձի հաշմանդամության վերափորձաքն-
նության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում,
վերափորձաքննության չներկայանալու և նրա մահանալու
դեպքում հուղարկավորությունը կատարած անձին նշանակ-
վում և վճարվում է թաղման նպաստ: Թաղման նպաստի չափը
200.000 ՀՀ դրամ է:

*«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 35,
ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի N1489-Ն
ընդունված*

10.5. Հաշմանդամության վերաբերյալ հարցեր

**Արդյոք Միրիայում նախկինում ստացված հաշմանդամու-
թյան սահմանումը ճանաչվու՞մ է ՀՀ-ում**

Ելնելով այն փաստից, որ տարբեր պետություններում
հաշմանդամության խումբը տարբեր ձևով է սահմանվում, Մի-
րիայի քաղաքացուն պետք է ՀՀ-ում հաշմանդամության կարգ
տրվի:

Ի՞նչ է անհրաժեշտ հաշմանդամության 1-ին, 2-րդ, 3-րդ խումբ ստանալու համար

1. Ամբուլատոր բուժման արդյունքում ստանալ հիվանդության պատմության թերթիկ (նաև կոչվում է էպիկրիզ):
2. Դիմել փաստացի բնակության վայրի պոլիկլինիկա /*Պոլիկլինիկա դիմելու համար պետք է հաշվառված լինեք Ձեր բնակության վայրում:*/ և ստանալ բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիր (հաշվառում չունեցող անձինք կարող են ենթարկվել բժշկասոցիալական փորձաքննության՝ ներկայացնելով տեղեկանք փաստացի բնակության վայրից): Ուղեգրում պետք է նշած լինի հիվանդության ախտորոշման, բուժման արդյունքների և օրգան-համակարգի ֆունկցիայի խանգարման աստիճանի մասին մանրամասն տեղեկություն:
3. Պոլիկլինիկայից ստացված ուղեգրի հիման վրա պետք է դիմեք փաստացի բնակության վայրը սպասարկող բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովին:
4. Փորձաքննության ժամանակ հանձնաժողովի անդամներն իրականացնում են անձի գնումը, ձևակերպում փորձաքննական ախտորոշումը և գնահատում նրա կենսագործունեության սահմանափակումների աստիճանը: Արդյունքները քննարկելուց հետո հանձնաժողովն ընդունում է փորձաքննական որոշում և, անձի անաշխատունակության չափի աստիճանից կախված, որոշվում է հաշմանդամության խումբը:

Ի՞նչ ժամկետով է անձին սահմանվում հաշմանդամություն

1-ին խմբի հաշմանդամությունը - երկու տարի ժամկետով,

2-րդ և 3-րդ խմբերի հաշմանդամությունը - մեկ տարի ժամկետով,

«հաշմանդամ երեխա» կարգավիճակը - երկու տարի ժամկետով կամ մինչև 18 տ.:

Որո՞նք են հաշմանդամության խումբ ստանալու հիմքերը

Հաշմանդամության խումբ ստանալու պատճառ կարող են լինել՝

1. մանկուց հիվանդությունը,
2. ընդհանուր հիվանդությունը (բնածին, ձեռքբերովի),
3. աշխատանքային խեղումը կամ վնասվածքը,
4. մասնագիտական հիվանդությունը (մասնագիտական գործունեության հետևանքով առաջացած),
5. բնական, տեխնածին և այլ աղետները, ինչպես նաև դրանց վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,
6. Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի և այլ ճառագայթային աղետների վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,
7. Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,
8. ՀՀ պաշտպանության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,

9. զինվորական ծառայության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,
10. զինվորական պարտականությունները կատարելիս ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը,
11. օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերը:
«ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 6

Ի՞նչ արտոնություններ ունեն հաշմանդամները

- Բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներն և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:
- Պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Ցերեկային ուսուցման հաշմանդամներին, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:
«ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 14

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների համար սահմանվում է աշխատաժամերի կրճատված տևողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի:
- Աշխատանքի ընդունելիս հաշմանդամների համար փորձաշրջան չի սահմանվում: Աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման ժամանակ աշխատանքի հավասար արտադրողականության և նույն որակավորման դեպքում հաշմանդամներն օգտվում են աշխատանքում մնալու առավելությունից:

«ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 19

- Հենաշարժական ապարատի խանգարումներով հաշմանդամներին տրվում է բնակության վայրին մոտ ավտոտնակ կառուցելու իրավունք:

«ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 32

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հասցե՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ.՝ (010) 52-08-30: Կարող եք դիմել նաև մարզպետարաններում սոցիալական պաշտպանության բաժիններին կամ համալիր սոցիալական ծառայությունների տարածաշրջանային կենտրոններ, եթե դրանք առկա են Ձեր համայնքում (ճշտեք առկայությունը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից)

10.6. Հանրային ծառայությունների համարանիշի վերաբերյալ հարցեր

Ի՞նչ է հանրային ծառայությունների համարանիշը

Այն ցանկացած ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում օրինական կարգով բնակվող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձին և փախստականին հատկացվող թվային տասը նիշերի համակցություն է: Այն տրվում է նախկինում տրամադրվող սոցիալական ապահովության քարտի փոխարեն: Հանրային ծառայությունների համարանիշը ձևավորվում է օրենքով սահմանված կարգով բնակչության պետական ռեգիստր մուտքագրված անձնական տվյալների՝ սեռի, ծննդյան օրվա, ամսվա, տարեթվի հիման վրա, ինչպես նաև ներառում է օժանդակ հերթական եռանիշ համար և ճշգրտող մեկ նիշ:

«Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքի հոդված 2

Ե՞րբ է անհրաժեշտ հանրային ծառայությունների համարանիշը

1. քաղաքացուն աշխատավարձ և նման այլ եկամուտ վճարելու, սոցիալական ապահովության պետական ծրագրերով նախատեսված կենսաթոշակ, նպաստ, հատուցում նշանակելու և վճարելու ժամանակ.
2. հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ հաշվարկելու և վճարելու ժամանակ.
3. բանկային հաշիվ բացելու ժամանակ.

4. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային ենթակայության կազմակերպությունների տեղեկատվական բազաները վարելու ժամանակ.
5. օրենքով նախատեսված այլ դեպքերում:

«Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքի հոդված 3

Այն դեպքերում, երբ անձը հրաժարվել է ձեռք բերել հանրային ծառայությունների համարանիշ, այդ հրաժարումը չի կարող որևէ իրավունքի սահմանափակման հիմք հանդիսանալ կամ խոչընդոտել անձի իրավունքների իրականացմանը: Հանրային ծառայությունների համարանիշ ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում Դուք պետք է տարածքային անձնագրային ծառայությունից ստանաք հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանք:

«Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքի հոդված 6

Ինչպե՞ս ստանալ հանրային ծառայությունների համարանիշ

Հանրային ծառայությունների համարանիշ ստանալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն կամ քաղաքացու բնակության վայրի տարածքային անձնագրային ծառայություն: Համարանիշը տրամադրվում է անվճար:

11. Մշտական բնակության հասցեում հաշվառվելու վերաբերյալ հարցեր

Ինչպե՞ս գրանցվել մշտական բնակության հասցեում

ՀՀ բնակիչը բնակչության պետական ռեգիստրում հաշվառվելու համար իր մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն տրամադրում է իր բնակության անձնագրային բաժին՝ ներկայացնելով սահմանված ձևի դիմում, անձը հաստատող և տվյալ վայրում բնակվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր:

ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք ներկայացնում են նաև ՀՀ տարածքում իրենց բնակության իրավունքը (կացության կարգավիճակը, ապաստան հայցողի կամ փախստականի կարգավիճակը) հավաստող փաստաթուղթ: Անձը հաստատող փաստաթղթի հետ միասին օտարերկրացիները ներկայացնում են նաև փաստաթղթի նոտարական կարգով վավերացված պատճենը կամ համապատասխան մարմնի կողմից տրված ապոստիլը:

Եթե չհաշվառված կամ բնակության վայրը փոխելու կապակցությամբ հաշվառվող անձը չի կարող ներկայացնել տվյալ տարածքում բնակվելու իր իրավունքը հավաստող փաստաթուղթ (օրինակ՝ վարձակալում է տվյալ գույքը), ապա անձի՝ դիմումում նշված հասցեում բնակվելու փաստը ստուգվում է ոստիկանության կողմից, դիմումը ստանալուց հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Դիմումում նշված հասցեում անձի բնակվելու փաստը ստուգելուց հետո նույն աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ը, ոստիկանության կողմից բնակության վայրի ան-

ձնագրային ծառայություն է ուղարկվում փաստացի բնակվելու փաստը հավաստող կամ հերքող տեղեկանք:

Տվյալ անձանց հաշվառումն իրականացվում է փաստացի բնակվելու փաստը հավաստող տեղեկանքը անձնագրային ծառայություն ստացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: **Նման հաշվառումը չի պահանջում այն տան սեփականատիրոջ համաձայնությունը, որտեղ Դուք բնակվում եք:** Փաստացի բնակվելու փաստը հերքող տեղեկանք ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում անձնագրային ծառայությունը գրավոր մերժում է դիմումատուին:

Հաշվառումը չի առաջացնում բնակելի տարածության սեփականության, ինչպես նաև օգտագործման իրավունք:

ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 14-ի N 1231-Ն որոշում

Հավելյալ տեղեկությունների համար դիմել. ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն, հասցե՝ ք.Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք, թեժ գիծ՝ (010) 37-02-64:

12. Վարորդական վկայական ստանալու վերաբերյալ հարցեր

Կարո՞ղ եմ օգտագործել իմ սիրիական վարորդական վկայականը Հայաստանում

Սիրիայի Արաբական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն եկած ազգությամբ հայ քաղաքացիներին Սիրիայում տրված վարորդական վկայականները չեն համապատասխանում 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհ

հային երթևեկության մասին» կոնվենցիային, որի հետևանքով դրանք գործածելի չեն համարվում Հայաստանի տարածքում: Դրանց փոխանակումը նույնպես արգելված է:

Սիրիայի Արաբական Հանրապետության՝ ազգությամբ հայ քաղաքացիներին՝ Սիրիայի Արաբական Հանրապետության ազգային վարորդական վկայականների հիման վրա, առաջին անգամ դիմելու դեպքում՝ առանց որակավորման քննություններ հանձնելու հատկացվում է ՀՀ ազգային վարորդական վկայականներ՝ մեկ տարի ժամկետով: ՀՀ ազգային վարորդական վկայական տրամադրվում է նոտարական կարգով թարգմանված սիրիական վարորդական վկայականի հիման վրա: ՀՀ ազգային վկայական ստանալու համար պետք է ներկայացվի նաև անձնագիր, գրանցման հասցեի բացակայության դեպքում՝ բնակվելու վայրից տեղեկանք:

ՀՀ ազգային վարորդական վկայական կարող է հատկացվել միայն մեկ անգամ, մեկ տարվա ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո անհրաժեշտ է հանձնել որակավորման քննություն: Որակավորման քննությունները բացասական հանձնելու դեպքում առանց որակավորման քննություններ հանձնելու հատկացված՝ ՀՀ ազգային վարորդական վկայականները համարվում են ուժը կորցրած:

ՀՀ կառավարության որոշում 2016թ. ապրիլի 15-ի N 389-Ն

Ի՞նչ քննություններ պետք է հանձնել վարորդական իրավունքի համար

1. տեսական,
2. գործնական:

Տեսական և գործնական քննությունները կարելի է հանձնել բազմաթիվ անգամներ, յուրաքանչյուր անգամ վճարելով սահմանված վճարները: Տեսական քննության դրական արդյունքը պահպանվում է 1 տարի, որի ընթացքում կարելի է գործնական քննություն հանձնել: Գործնական քննությունը բացասական ստանալու դեպքում անհրաժեշտություն չկա տեսական քննությունը նորից հանձնելու:

Ի՞նչ վճարներ են սահմանված քննությունների համար

Տեսականի համար՝ 3.000 ՀՀ դրամ,

Գործնականի համար՝ 13.000 ՀՀ դրամ,

Վարորդական իրավունքի վկայականի համար սահմանված է վճար՝ 12.000 ՀՀ դրամի չափով:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել Երևանի հաշվառման-քննական բաժին, հասցե՝ ք. Երևան, Գաջեգործների 76 հասցեով, հեռ.՝ (010) 43-03-91, կամ այցելել հետևյալ կայքը՝ www.varord.am:

13. Անվան փոփոխման վերաբերյալ հարցեր

Տասնվեց և ավելի տարեկան անձն իրավունք ունի սահմանված կարգով փոխելու իր անունը: Սա ներառում է անունը, հայրանունը և ազգանունը: Տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձը իր անվան փոխումը կատարում է ծնողների, որդեգրողների կամ խնամակալի (հոգաբարձուի) գրավոր համաձայնության առկայության դեպքում, իսկ նման համաձայնության

բացակայության դեպքում՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, բացառությամբ մինչև նրա՝ օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչվելու դեպքերի:

Ո՞ր մարմինն է կատարում անվան փոխման պետական գրանցումը

Անվան փոխման պետական գրանցումը կատարվում է մշտական բնակչության կամ ծննդի պետական գրանցման վայրի ՔԿԱԳ մարմնում՝ ՀՀ արդարադատության նախարարության համաձայնությամբ:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 59

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ անվան փոխման պետական գրանցման համար

1. դիմողի անձը հաստատող փաստաթուղթը,
2. անունը փոխել ցանկացող անձի ծննդյան վկայականը, եթե դրանում կատարվելու են փոփոխություններ,
3. դիմողի ամուսնության վկայականը, եթե դիմողն ամուսնացած է,
4. ամուսնալուծության վկայականը, եթե դիմողը ցանկանում է վերականգնել իր մինչամուսնական ազգանունը,
5. դիմողի անչափահաս երեխաներից յուրաքանչյուրի ծննդյան վկայականը,
6. 16-18 տարեկան անձանց դեպքում՝ անձի ծնողների կամ օրինական ներկայացուցիչների համաձայնությունն անվան փոխման մասին,

7. զորամասից (զինվորական կառավարման մարմնից) ծառայության մասին տեղեկանք՝ զինծառայողների դեպքում,
8. լուսանկար 2 հատ 3 x 4 սմ չափսի,
9. անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 59

ՀՀ կառավարության 2005թ հունիսի 23-ի N 941-Ն որոշում

Անվան փոխման մասին դիմումը ՔԿԱԳ-ի տարածքային մարմնի կողմից քննության է առնվում դիմումը տալու օրվանից երկամսյա ժամկետում:

Անվան փոխման գրանցման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Ե՞րբ է հնարավոր մինչև 16 տարեկան երեխաների անվան փոփոխումը

Մինչև 16 տարեկան երեխաների անվան, հայրանվան և ազգանվան գրանցում կատարել թույլատրվում է հետևյալ հարգելի պատճառներից որևէ մեկի առկայության դեպքում՝

1. անվան, ազգանվան անբարեհնչունության,
2. անվան կամ ազգանվան արտասանության դժվարության,
3. ծնողների համաձայնությամբ մյուս ծնողի ազգանուն կրելու ցանկություն,
4. եթե ծնունդ գրանցելիս երեխային ազգանուն կամ անուն է տրվել առանց ծնողների ցանկությունը հաշվի առնելու,
5. եթե երեխան փաստացի կրում է իր ծննդյան գրանցման մեջ նշված անունից տարբերվող անուն՝ ելնելով երեխայի լավագույն շահերից,

6. եթե ծննդի գրանցման մեջ նշված է երեխայի թերի անունը (փաղաքական, կրճատ, փոքրացնող):
ՀՀ կառավարության 2005թ հունիսի 23-ի N 941-Ն որոշում

Ե՞րբ է հնարավոր 16 տարեկանից բարձր անձանց անվան փոփոխումը

16 տարեկանից բարձր անձանց անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարել թույլատրվում է հետևյալ հարգելի պատճառներից որևէ մեկի առկայության դեպքում՝

1. անվան, հայրանվան, ազգանվան անբարեհնչունության,
2. անվան, հայրանվան, ազգանվան արտասանության դժվարության,
3. ամուսնու ցանկության՝ մյուս ամուսնու հետ միասին մեկ ընդհանուր ազգանուն կրելու,
4. մինչամուսնական ազգանունը կրելու ցանկության,
5. երեխաների հետ միասին ընդհանուր ազգանուն կրելու ցանկության, եթե ամուսինը մահացել է, իսկ դիմողը եղել է մինչամուսնական ազգանունով,
6. դիմողի՝ իրեն դաստիարակած անձի անունով հայրանուն և ազգանուն կրելու ցանկության,
7. դիմողի ազգությանը համապատասխան ազգանուն և անուն կրելու ցանկության,
8. դիմողի տոհմական ազգանունը կրելու ցանկության:
9. եթե անձը փաստացի կրում է իր ծննդյան գրանցման մեջ նշված անունից տարբերվող անուն:

ՀՀ կառավարության 2005թ հունիսի 23-ի N 941-Ն որոշում

Որքա՞ն է կազմում անվան փոփոխման գրանցման վճարը

Անվան, հայրանվան, ազգանվան փոփոխման համար գանձվում է վճար 5000 դրամ: Եթե անձը ցանկանում է մինչև սահմանված երկամսյա ժամկետը ստանալ ՀՀ արդարադատության նախարարության՝ անվան, հայրանվան, ազգանվան փոփոխման վերաբերյալ եզրակացությունը, ապա անձը պետք է կատարի հետևյալ վճարումները.

- երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ 50000 դրամ,
- հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ 30000 դրամ,
- տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ 20000 դրամ:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ արդարադատության նախարարություն, հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. (010) 59-41-61 կայքէջ՝ www.moj.am

14. Ընտրելու իրավունքի վերաբերյալ հարցեր

ՀՀ-ում ո՞վ ունի ընտրելու իրավունք

1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը (այսուհետ՝ քվեարկության օրը) 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:
2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեզիստում՝

- 1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.
- 2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատագրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.
- 3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող):
- 4) Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձանց վրա:

ՀՀ ընտրական օրենսգրք (Մահմանադրական օրենքի) հոդված 2

Ովքե՞ր չունեն ընտրելու իրավունք

Ընտրելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանք-

ների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

ՀՀ ընտրական օրենսգրք (Մահմանադրական օրենքի) հոդված 2, մաս 4

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, հասցե՝ ք.Երևան, Գևորգ Քոչարի փող., 21ա շենք, հեռ.՝ (010) 54-35-23

15. Մաքսային օրենսդրության վերաբերյալ հարցեր

Ի՞նչն է համարվում ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական գույք

- անձի անձնական գործածության օգտագործված իրերը,
- անձնական օգտագործման մեկ ավտոմեքենան,
- տնային օգտագործված գույքը:

Դրանք չպետք է ունենան գործարանային փաթեթավորում ու պիտակավորում և ֆիզիկական անձի կողմից պետք ձեռք բերված լինեն նախքան ՀՀ ժամանելը:

ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք՝ ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, անձնական օգտագործման մեկ ավտոմեքենան և տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում և ֆիզիկական անձի կողմից ձեռք են բերվել նախքան ՀՀ ժամանելը: Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք

է նախքան ՀՀ ներմուծվելը վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ առնվազն 6 ամիս հաշվառված լինի ՀՀ մշտական բնակության ժամանոդ ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ ՀՀ մշտական բնակության ժամանոդ անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան ֆիզիկական անձի՝ ՀՀ մշտական բնակության ժամանելու օրը:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5 հոդված

Ի՞նչ արտոնություն է սահմանված ՀՀ մշտական բնակության ժամանոդ ֆիզիկական անձանց համար

ՀՀ մշտական բնակության ժամանոդ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հարկադիր տեղահանվածները կամ փախստականները, կարող են առանց մաքսային վճարների (**բացառությամբ մաքսավճարի**) վճարման ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249 հոդված 11-րդ մաս

Ի՞նչ արտոնություն է սահմանված հարկադիր տեղահանվածների կամ փախստականների համար, անկախ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության նպատակով ժամանելու հանգամանքից

Հարկադիր տեղահանվածները կամ փախստականները, անկախ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության նպատակով ժամանելու հանգամանքից, կարող են մաքսատուրքի արտոնությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը, եթե մաքսային մարմիններ են ներկայացնում համապատասխան կար-

գավիճակը հաստատող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տրամադրած փաստաթուղթը:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249 հոդված 22-րդ մաս

Ի՞նչ է մաքսավճարը

Մաքսավճար մաքսային օրենքով սահմանված կարգով և չափով գանձվող, պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է:

Ի՞նչն է համարվում ՀՀ մշտական բնակչության ժամանող ֆիզիկական անձանց անձնական գույք և դրանց բնափրային չափերը

Հայաստանի Հանրապետություն ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման իրերի բնափրային չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, մասնավորապես.

1. կենցաղային և անձնական օգտագործման օգտագործված սարքեր՝ յուրաքանչյուր տեսակից 3 հատ.
2. օգտագործված կահույք՝ յուրաքանչյուր տեսակից մեկ լրակազմ.
3. անձնական օգտագործման մեկ ավտոմեքենա.
4. անձնական գործածության օգտագործված իրեր և այլ տնային օգտագործված գույք՝ առանց քանակային սահմանափակումների:

Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է վերջին անգամ հաշվառումից հանված լինի այն երկրում, որտեղ ՀՀ մշտական բնակչության ժամանող անձը վերջին

անգամ մշտապես բնակվել է՝ նախքան ՀՀ որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

ՀՀ կառավարության 2015 թվականի թիվ 1312-Ն որոշում

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ անձնական գույքը մաքսային արտոնություններով ներմուծելու համար

ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձն անձնական օգտագործման գույքն արտոնությամբ ներմուծելու համար վերադաս մաքսային մարմին է ներկայացնում դիմում, որում նշում է տեղեկություններ տեղափոխվող ապրանքների անվանման, քաշի և քանակի վերաբերյալ, կցելով հետևյալ փաստաթղթերը՝

- 1) ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը կամ նույնականացման քարտի պատճենը, կամ ՀՀ կառավարության լիազոր մարմնի տրամադրած՝ ՀՀ-ում մշտական բնակության իրավունքը հավաստող այլ փաստաթուղթ.
- 2) մինչև ՀՀ ժամանումն օտարերկրյա պետությունում քաղաքացու մշտական բնակության փաստը հավաստող փաստաթուղթ՝ օտարերկրյա անձնագրի կամ կացության քարտի պատճենը, կամ օտարերկրյա պետության տրամադրած մշտական բնակության փաստի վերաբերյալ այլ փաստաթուղթ՝ միջազգային վավերացմամբ (ապոստիլ) կամ օտարերկրյա պետությունում ՀՀ հյուպատոսության վավերացմամբ.
- 3) օտարերկրյա պետության լիազոր մարմնի տրամադրած՝ ավտոմեքենայի և (կամ) կցորդի սեփականության փաստը հավաստող փաստաթղթի պատճենը.

- 4) «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված պայմանագրի անբաժանելի մասը համարվող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 49-րդ գլխի դրույթներով սահմանված՝ ֆիզիկական անձանց կողմից ապրանքների հայտարարագրման ժամանակ պահանջվող փաստաթղթերը.
- 5) անձնական օգտագործման ավտոմեքենա ներմուծելու դեպքում ավտոմեքենայի հաշվառման (գրանցման) փաստաթուղթը, որով հիմնավորվում է, որ այն նախքան ՀՀ ներմուծվելը վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ առնվազն վեց ամիս հաշվառված է եղել ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով՝ այն երկրում, որտեղ ՀՀ մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է՝ նախքան ՀՀ-ում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

ՀՀ կառավարության 2015 թվականի թիվ 1461 որոշում

Ուվք՞եր են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտապես բնակված անձ

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտապես բնակված է համարվում այն անձը, որը դիտարկվող ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ բնակվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս 184 օր և ավելի:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249 հոդված 14-րդ մաս

Ո՞վ է համարվում ՀՀ-ում մշտապես բնակվող անձ

ՀՀ տարածքում մշտապես բնակված է համարվում այն անձը, որը դիտարկվող ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ գտնվել է ՀՀ տարածքում 181 օր և ավելի: Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանելիս Հայաստանի Հանրապետության հաշվառում ունեցող ֆիզիկական անձանց համար Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանման օր է համարվում Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության նպատակով ժամանելու օրվան հաջորդող 180 օրվա ընթացքում մաքսային մարմին գրավոր դիմելու օրը:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249 հոդված 15-րդ և 19-րդ մասեր

Որքա՞ն ժամանակահատվածում կարող է ներմուծվել անձնական օգտագործման գույքը

ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց, այդ թվում՝ հարկադիր տեղահանվածների կամ փախստականների, անձնական օգտագործման գույքը կարող է ներմուծվել մշտական բնակության նպատակով ՀՀ ժամանման օրվանից ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249 հոդված 11-րդ և 17-րդ մաս

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 7, հեռ.՝ (060) 54-46-57, թեժ գիծ՝ 060 54-44-44

16. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ հարցեր

Կա՞ն, արդյոք, սիրիահայերին տրամադրվող վարկային արտոնություններ

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ) ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) հովանավորությամբ 2013թ. մարտ ամսից նախաձեռնել է «Սիրիահայերի համար սկսնակ գործարարության դասընթացների» անվճար ծրագիր, որի նպատակն է օգնել սիրիահայերին իրականացնել իրենց գործարար գաղափարները:

«Աջակցություն սիրիահայերին» ծրագիր

2012 թվականի նոյեմբերից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը նախաձեռնել է «Աջակցություն սիրիահայերին» ծրագիրը, որի շրջանակում պարբերաբար կազմակերպվում են դասընթացներ սեփական գործ հիմնել ցանկացող սիրիահայերի համար՝ Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության ծավալման առանձնահատկությունների, գործող հարկային, մաքսային օրենսդրությունների և այլ ուղղություններով, B2B հանդիպումներ Հայաստանի տարբեր ոլորտներում գործող գործարարների հետ, տեղեկատվական բնույթի հանդիպումներ արտադրություններում, ազատ տնտեսական գոտիներում և այլուր՝ ելնելով մասնակիցների ցանկություններից, տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում Հայաստանում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս առաջացող խնդիրների վերաբերյալ:

Ստեղծվել է սիրիահայերի տվյալների հիմնապաշար, որը պարբերաբար համալրվում է, և որի հիման վրա կատարվում է կարիքների բացահայտում և հստակեցում՝ հետագա աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Մեփական գործ հիմնել ցանկացող սիրիահայերի համարիրականացվում է սկսնակ գործարարների աջակցության ծրագիր: Մասնակիցները ծանոթանում են Հայաստանում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու պայմաններին, ձեռք են բերում բիզնեսի պլանավորման համապատասխան գիտելիք և կազմակերպության մասնագետների օգնությամբ կազմում են բիզնես-ծրագիր՝ արտոնյալ վարկ ստանալու նպատակով: Ծրագիրը շարունակական է՝ ելնելով սիրիահայերի կարիքներից:

Ո՞ր դեպքում կտրամադրվեն վարկեր և ի՞նչ պայմաններով

Ծրագրին մասնակցած և լավագույն գնահատականի արժանացած կենսունակ գործարար ծրագրերի համար կտրամադրվի վարկ հետևյալ պայմաններով՝

- առավելագույնը 5 մլն դրամ,
- տարեկան տոկոսադրույքը՝ 4%,
- մինչև 5 տարի մարման ժամկետով,
- Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվող երաշխավորություն (100%) առանց գրավի:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ ՓՄՁ ԶԱԿ, հասցե՝ ք.Երևան, Մհեր Մկրտչյան փող., 5ա շենք, հեռ.՝ (010) 58-32-61, ինչպես նաև ք. Երևան, Կոմիտասի պող., 49/3 շենք, 7-րդ հարկ, հեռ.՝ (010) 23-71-02 (106):

Կայք՝ <http://www.smednc.am/hy/>

Ինչպե՞ս կարող է անձը ՀՀ-ում զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ

- գրանցվելով որպես անհատ ձեռնարկատեր,
- ստեղծելով առևտրային իրավաբանական անձ:

Ո՞վ է անհատ ձեռնարկատերը (ԱՁ)

ԱՁ-ն այն անձն է, ով իրավունք ունի առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով, իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է:

Ովքե՞ր կարող են լինել անհատ ձեռնարկատերեր

- ՀՀ քաղաքացիները,
- Փախստականները,
- Օտարերկրյա քաղաքացիները,
- Քաղաքացիություն չունեցող անձինք:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի հոդված 1

Անհատ ձեռնարկատերն ունի գույք՝ սեփականության իրավունքով, և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Նա կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի հոդված 6

Անհատ ձեռնարկատերն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր, ստանձնած պարտավորությունների կատարման համար:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի հոդված 9

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ որպես ԱԶ հաշվառվելու համար

- 1) անձնագրի պատճենը (օտարերկրացու դեպքում՝ անձնագրի պատճենը վավերացված և թարգմանված նոտարի կողմից),
- 2) վճար՝ 3000 ՀՀ դրամ:

Որպես ԱԶ հնարավոր է նաև գրանցվել ՀՀ Կառավարության էլեկտրոնային ռեգիստրի միջոցով, հետևյալ հղումով՝ <https://www.e-register.am/>

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ԱԶ հաշվառումից հանելու համար

1. դիմում,
2. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման (գրանցման) վկայական:

Որո՞նք են հանդիսանում առավել կիրառվող առևտրային իրավաբանական անձի տեսակները.

- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները,
- բաժնետիրական ընկերությունները:

Ո՞րն է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը

Մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

Ընկերությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Այն կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 3

Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 5

Որո՞նք են բաժնետիրական ընկերությունները

- բաց բաժնետիրական ընկերություն,
- փակ բաժնետիրական ընկերություն,

որը պետք է արտահայտվի Ընկերության կանոնադրության և ֆիրմային անվանման մեջ:

Ո՞րն է բաց բաժնետիրական ընկերությունը

Ընկերությունը համարվում է բաց, եթե նրա բաժնետերերն իրավունք ունեն օտարել (վաճառել, նվիրել և այլն) իրենց պատկանող բաժնետոմսերն առանց մյուս բաժնետերերի համաձայնության:

Բաց բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի թիվը չի սահմանափակվում:

Ո՞րն է փակ բաժնետիրական ընկերությունը

Ընկերությունը համարվում է փակ, եթե ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա բաժնետերերի (այդ թվում՝ հիմնադիրների) կամ նախապես որոշված այլ անձանց միջև:

Փակ ընկերությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 բաժնետեր: Եթե բաժնետերերի թիվը 49-ից ավելի է դարձել, ապա ընկերությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի կամ համապատասխանաբար կրճատի իր բաժնետերերի թիվը: Հակառակ դեպքում այն ենթակա է լուծարման դատական կարգով:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 8

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ առևտրային իրավաբանական անձանց սկզբնական գրանցման համար

ՄՊԸ-ի դեպքում միայն հիմնադրի (հիմնադիրների) անձնագրի (անձնագրերի) պատճենները:

ՄՊԸ հնարավոր է նաև գրանցել ՀՀ Կառավարության Է-լեկտրոնային ռեգիստրի միջոցով, հետևյալ հղումով՝ <https://www.e-register.am/>

Բաց կամ փակ բաժնետիրական ընկերություն գրանցելու դեպքում անհրաժեշտ է հետևյալը՝

1. դիմում,
2. իրավաբանական անձ հիմնադրելու մասին հիմնադիր ժողովի արձանագրությունը: Մեկ անձի կողմից իրավաբանական անձի հիմնադրման դեպքում ներկայացվում է հիմնադրի գրավոր որոշումը, գործադիր մարմնի ղեկավարի անձնագրի պատճենը:

Առևտրային իրավաբանական անձանց սկզբնական գրանցման համար վճարներ նախատեսված չեն:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, հասցե՝ ք.Երևան, Կոմիտասի պող., 49/3 շենք, հեռ.՝ (010) 20-14-45, (010) 20-14-49

Ո՞րն է համարվում ընտանեկան ձեռնարկատիրություն

Հարկային օրենսդրության կիրառության իմաստով՝

1. ընտանեկան ձեռնարկատիրություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով ընտանիքի մեկից ավելի անդամների կողմից համատեղ իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը.
2. ընտանիքի անդամներ են համարվում ծնողը, ամուսինը, զավակը, եղբայրը, քույրը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.7 հոդվածի 1-ին կետի 1, 2-րդ ենթակետեր

Ուլքե՞ր են համարվում ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասությո՞ւն առանց ԱԱՀ-ի, չի գերազանցել 18.0 մլն դրամը: Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու պայմանը բավարարող անձն ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև այդ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում շրջանառության հարկ կամ ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե մինչև այդ տարվա փետրվարի 20-ը իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

Պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում շրջանառության հարկ կամ ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված) անձը պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրն իր հաշվառման վայրի

հարկային մարմին է ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.8 և 13.7 հոդվածի 3-րդ կետ

Ազատվում են արդյո՞ք ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները պետական հարկերից

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են ընտանեկան ձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից), բացառությամբ ստորև նշված դեպքերի:

Ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամներին (այդ թվում՝ վարձու աշխատող համարվող) ընտանեկան ձեռնարկատիրության մասով հարկային գործակալի կողմից վճարվող հարկվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում և վճարվում է յուրաքանչյուր անձի համար ամսական 5 հազար դրամի չափով՝ մինչև եկամուտների հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

17. Հարկերի վերաբերյալ հարցեր

Որո՞նք են հարկերի տեսակները

Հայաստանի Հանրապետությունում հարկատեսակներն են՝
ա) պետական հարկերը՝

- շահութահարկ,
- եկամտային հարկ,
- ակցիզային հարկ,
- ավելացված արժեքի հարկ,
- դրոշմանիշային վճար:

Օրենքով կարող են սահմանվել վերոհիշյալ հարկատեսակներին փոխարինող հաստատագրված վճարներ, շրջանառության հարկեր կամ արտոնագրային վճարներ: Սույն պարբերության դրույթը չի տարածվում դրոշմանիշային վճարի վրա.

բ) տեղական հարկերը,

- գույքահարկ,
- հողի հարկ,
- հյուրանոցային հարկ:

Այլ օրենքներով կարող են սահմանվել այլ տեղական հարկատեսակներ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12 հոդված

Ո՞րն է եկամտային հարկը

Եկամտային հարկը ՀՀ պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որը գանձվում է ֆիզիկական անձանցից հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամտից:

Ուվքե՞ր են եկամտային հարկ վճարողները

- ՀՀ քաղաքացին,
- փախստականը,
- օտարերկրյա քաղաքացին,
- քաղաքացիություն չունեցող անձը,
- անհատ ձեռնարկատերը,
- նոտարը:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 3

Ի՞նչ է հարկվող եկամուտը

Հարկվող եկամուտը ֆիզիկական անձի հաշվետու ժամանակաշրջանի համախառն եկամտի և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 4

Որո՞նք են հարկ վճարողների պարտականությունները

Ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը, նոտարները պարտավոր են հարկային տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ ելեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել տարեկան եկամուտների մասին հաշվարկ և եկամտային հարկի գումարը վճարել պետական բյուջե տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ից ոչ ուշ:

Հարկ վճարողներին եկամուտներ հաշվարկելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը:

Եթե Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում կազմակերպություններն ազատվում են ֆիզիկական

անձանց վճարվող եկամուտներից աղբյուրի մոտ եկամտային հարկի պահումից, ապա այդ կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կարող են հարկային մարմին ներկայացվող՝ վերադաս հարկային մարմնի հաստատած ձևով գրավոր հայտարարության հիման վրա հանդես գալ որպես հարկային գործակալ և իրականացնել ֆիզիկական անձանց հաշվարկվող եկամուտներից հարկի պահում: Այս դեպքում հարկային գործակալը հարկի պահումը կատարում է հայտարարությունը ներկայացնելու ամսվանից սկսած:

Եթե անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ստացման ենթակա (պասիվ եկամուտների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտներից սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթներին համապատասխան եկամուտների ստացման աղբյուրի մոտ եկամտային հարկի պահում չի իրականացվում (զանձում չի կատարվում), ապա անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք եկամտային հարկը հաշվարկում են յուրաքանչյուր ամիս՝ հիմք ընդունելով սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով սահմանված դրույքաչափերը և յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ը բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում հարկային մարմնի սահմանած ձևի եկամտային հարկի պարզեցված հաշվարկ:

Եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման (պասիվ եկամուտների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շր-

ջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարման) ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 12, 13-րդ հոդվածի 3-րդ մաս, 14, 22, 23

Ի՞նչ է շահութահարկը

Շահութահարկը հարկ վճարողների կողմից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

ՀՀ օրենքը շահութահարկի մասին հոդված 2

Ովքե՞ր են հանդիսանում շահութահարկ վճարող

- ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունները,
- ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպությունները:

Ռեզիդենտ են համարվում ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած) կազմակերպությունները:

Ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 4

Ո՞րն է շահութահարկով հարկվող օբյեկտը

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

Ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 5

Ո՞րն է հարկվող շահույթը

Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի (հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի՝ անկախ ստացման աղբյուրներից) և օրենքով նշված նվազեցումների դրական տարբերությունն է: Ընդ որում՝ նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 6

Ի՞նչ է ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ)

ԱԱՀ-ն անուղղակի հարկ է, որը գանձվում է ապրանքների ներմուծման դեպքում, մատակարարի կողմից մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների դիմաց և վերականգնվում է գնորդի կողմից առևտրային շղթայի յուրաքանչյուր փուլում մինչև վերջնական սպառողը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 1

Ովքե՞ր են համարվում ԱԱՀ վճարողներ

Ցանկացած անձ (անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ և այլն), որն իրականացնում է տնտեսական գործունեություն, և որի կողմից նախորդ օրացուցային տարում իրականացրած գործարքների հարկվող շրջանառությունը գերազանցում է 58.35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շեմը) համարվում է ԱԱՀ վճարող:

Անձը ընթացիկ տարում համարվում է ԱԱՀ վճարող, եթե ընթացիկ տարում որևէ պահի դրությամբ իրականացրած գործարքների հարկվող շրջանառությունը գերազանցում է ԱԱՀ-ի շեմը: Այս դեպքում ԱԱՀ-ով հաշվարկվում է ԱԱՀ-ի շեմը գերազանցած մասի համար:

Ո՞ր գործարքներն են հարկվում ԱԱՀ-ով

- ապրանքների մատակարարումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ իրականացված),
- ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ իրականացված),
- ապրանքների ներմուծումը:

Ո՞ր գործարքներն են համարվում ապրանքների մատակարարում

Ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:

Ապրանքի մատակարարում չի համարվում ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (սպառողական նպատակներով օգտագործման ենթակա)՝ անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույքի (այդ թվում՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, անձնական օգտագործման ավտոմեքենայի) և ֆիզիկական անձանց կողմից գույքային իրավունքների օտարման տնտեսական

գործունեություն համարվող գործարքը, եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

- հասարակական և արտադրական նշանակության շենք-շինությունների, հողերի օտարումը,
- մեկ օրացուցային տարում նույն տեսակի գույքի երկու և ավելի անգամ օտարումը, եթե երկու և ավելի անգամ օտարվող գույքը ձեռք է բերվել մեկ տարվա ընթացքում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 6

Ո՞ր գործարքները չեն հարկվում ԱԱՀ-ով

- անձանց անձնական գույքի և բնակելի շինության օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, որոնք չեն համարվում ապրանքների մատակարարում,
- կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքները, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը 0 տոկոս է և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման,
- ցանկացած ապրանքներ կամ ծառայություններ, որոնք ազատ կերպով մատակարարվում են որպես երաշխիքի կամ երաշխիքային համաձայնագրի մաս,
- ապրանքների կամ ծառայությունների անհատույց մատակարարում, եթե դա կատարվում է ՀՀ կառավարության որոշումների հիման վրա կամ հասարակական (այդ թվում

բարեգործական) և կրոնական կազմակերպությունների կողմից օրինական ձևով,

- այն ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը, որոնք ազատված են ԱԱՀ-ից:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 7

Ի՞նչ է գույքահարկը

Գույքահարկը սեփականության իրավունքով հարկ վճարողներին պատկանող՝ հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 2

Ովքե՞ր են գույքահարկ վճարողները

Գույքահարկ վճարող են համարվում ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները, ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց ՀՀ տարածքում պատկանում է հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ ՀՀ պետական մարմինների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 3

Որոնք են գույքահարկով հարկվող օբյեկտները

- շենքեր և շինությունները,

- անհատական բնակելի տուն, բնակարան, այգետնակ (ամառանոց),
- բազմաբնակարան բնակելի շենք,
- բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածք,
- ավտոտնակ,
- հասարակական նշանակության շինություն,
- արտադրական նշանակության շինություն,
- անավարտ (կիսակառույց) շինություն,
- ՀՀ օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված, սակայն դեռևս իրավունքների պետական գրանցում չստացած շինություններ,
- սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքեր և շինություններ (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ),
- փոխադրամիջոցները՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոց, ջրային փոխադրամիջոց, ձյունագնաց, մոտոամենագնաց (քվադրոցիկլ) և մոտոցիկլետ:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 4

Կազմակերպությունները գույքահարկի հաշվարկված գումարները բյուջե են վճարում յուրաքանչյուր կիսամյակ՝ մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ ՀՀ պետական բյուջե:

Հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե:

Որո՞նք են Ձեր իրավունքները որպես հարկ վճարող

- Հարկ վճարողն իրավունք ունի՝
- ծանոթանալ իր գործունեության ստուգումների ակտերին.
- հարկային մարմին ներկայացնել բացատրություններ հարկերի հաշվարկման ու վճարման և ստուգումների արդյունքների վերաբերյալ, օրենքով սահմանված կարգով գանգատարկել հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները, առանձին հարկատեսակի մասին օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով դիմել հարկային արտոնություն ստանալու համար.
- սահմանված կարգով դիմել հարկային մարմին՝ պարզաբանում ստանալու համար:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 14 հոդված

Որո՞նք են Ձեր պարտականությունները որպես հարկ վճարող

Հարկ վճարողը պարտավոր է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ), կազմել հաշվետվություններ՝ իր ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ.
2. հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում ինքնուրույն հաշվարկել սահմանված հարկերի գումարները և իրականացնել դրանց վճարումը բյուջե.
3. սահմանված ժամկետում հարկային մարմին ներկայացնել հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ.
4. ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում սահմանված կարգով կատարելով նաև դրանց կանխավճարային մուծումները.
5. անհրաժեշտ պայմաններ ապահովել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների (ուսումնասիրությունների) համար, այդ թվում՝ օրենքով սահմանված դեպքերում ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց գրավոր պահանջով էլեկտրոնային կրիչով տրամադրել հաշվապահական հաշվառման համակարգչային

ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենը (ստուգման հանձնարարականով ընդգրկվող ժամանակահատվածի մասով)։

6. ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը։
7. հարկային մարմնի ստուգումների (ուսումնասիրությունների) հետևանքով բացահայտված, թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի գումարի չափով ուղղումներ (ճշգրտումներ) կատարել հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառմանը և (կամ) գրանցումներին վերաբերող) փաստաթղթերում։
8. հարկային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի՝ ոչ ռուսերեն և անգլերեն լրացված (կազմված) օրինակներին կից ապահովել դրանց հայերեն թարգմանված տարբերակները։
9. իր գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում առավել տեսանելի տեղում (իսկ գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման, օպերատիվ ֆինանսական դեկավարման վայրերում՝ համապատասխան ցուցանակների վրա) փակցնել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ նշելով հարկ վճարողի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը), հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության

տվյալ վայրի հասցեն և տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները):
«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդված

Որո՞նք են հարկային տեսուչների իրավունքները

Հարկային տեսուչն իրավունք ունի.

- տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործել տնտեսվարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումներ,
- պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են հրամանում կամ հանձնարարագրում նշված նպատակներին,
- անհրաժեշտության դեպքում ստուգման ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի համաձայնությամբ գործ ունենալ միայն տնտեսվարող սուբյեկտի մասնագետների հետ,
- սահմանել ժամկետներ՝ բացահայտված այն թերությունների և խախտումների վերացման համար, որոնք չեն առաջացնում քրեական կամ վարչական պատասխանատվություն,
- վերցնել փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին և չեն խոչընդոտում տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին:

Որո՞նք են հարկային տեսուչների պարտականությունները

Հարկային տեսուչը պարտավոր է.

- պահպանել ստուգման հետ առնչվող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները,
- առանց տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի գրավոր համաձայնության չհրապարակել ստուգման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները տնտեսվարող սուբյեկտի գործառնությունների վերաբերյալ, գործունեության մասին ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և դրան առնչվող ցանկացած այլ տեղեկատվություն,
- պահպանել տնտեսվարող սուբյեկտի՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքները և շահերը,
- չխոչընդոտել տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին,
- իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնել տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձանց,
- ստուգման ընթացքում բացառապես հիմնվել ՀՀ պաշտոնական տեղեկագրում և ՀՀ գերատեսչական-նորմատիվ ակտերի պաշտոնական տեղեկագրում հրապարակված օրենքների և այլ իրավական ակտերի վրա, եթե դրանց ուժի մեջ մտնելու պահին սահմանված է նման հրապարակման պահանջ,
- ստուգման ընթացքում գրավոր պատասխանել տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի՝ անմիջականորեն տնտեսվարող սուբյեկտի ստուգվող ժա-

մանակաշրջանին վերաբերող ստուգման հետ առնչվող ցանկացած գրավոր հարցման:

Ստուգումն իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում ժամանակավորապես վերցրած փաստաթղթերի, իրերի, փորձանմուշների և այլ անհրաժեշտ նյութերի որակական և քանակական ամբողջականության պահպանման ու սահմանված ժամկետում վերադարձման համար:

Արգելվում է ստուգման ընթացքում կապարակնքել պահեստներ, շինություններ, դրամարկղեր, էներգիայի աղբյուրներ, սարքավորումներ, սարքեր և այլն, բացառությամբ հարկային մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող գույքագրման և չափագրման դեպքերի, եթե դրանք չեն խոչընդոտում տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին:

Ի՞նչ կարգով են բողոքարկվում հարկային տեսուչների գործողությունները

- եթե օրենքով այլ բան չի նախատեսվում, ստուգումն իրականացնող անձանց գործողությունները, ինչպես նաև ստուգման արդյունքում կազմված ակտը երկու ամսվա ընթացքում կարող են բողոքարկվել այն պետական մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում է (են) ստուգող անձը (անձինք), կամ դատարան,
- բողոքները վերադասության կարգով քննության են առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքն ստացվելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում բողոքի վերաբերյալ

պատասխան չտրվելու դեպքում բողոքում բերված փաստարկները համարվում են ընդունված: Սույն կետով սահմանված ժամկետի հաշվարկն սկսվում է գրավոր բողոքը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից, ընդունված որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի այն բողոքարկել դատարան:

Ինչպիսի՞ հարկային արտոնությունների համակարգ է գործում ՀՀ-ում

Հայաստանում գործում են հետևյալ հարկային արտոնությունները՝

1. ԱԱՀ վճարումը հետաձգվում է 1-3 տարի ժամկետով սարքավորումների ներմուծման համար:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք հոդվածներ 6՝, 26, ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 4-ի N 1119-Ն որոշում

2. ԱԱՀ վճարումը հետաձգվում է 3 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում ապրանքների ներմուծման դեպքում:

ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 4-ի N 1119-Ն որոշում

3. Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած արտահանման խոշոր ծրագիր իրականացնողների համար (բացառությամբ՝ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) վերամշակման, թանկարժեք քարերի մշակման և (կամ) ի-

րացման, ոսկերչական իրերի արտադրության և (կամ) իրացման, թանկարժեք մետաղների արտադրության և (կամ) իրացման, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության և (կամ) իրացման ոլորտների) շահութահարկի դրույքաչափը կազմում է 5% առնվազն 40 մլրդ դրամ արտահանման դեպքում, 2% առնվազն 50 մլրդ դրամ արտահանման դեպքում:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 33

4. Աջակցություն նորաստեղծ ՏՏ ընկերություններին: ՏՏ ոլորտի նորաստեղծ հավաստագրված ընկերությունները ազատված են շահութահարկից, իսկ եկամտային հարկի դրույքաչափը կազմում է 10%:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք

5. Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար նախատեսված տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և նյութերի ներմուծումն ազատվում է օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված մաքսատուրքից, եթե այդպիսի տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը չեն արտադրվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում (կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով) կամ չեն համապատասխանում ներդրու-

մային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին:

ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 17-ի թիվ 1118-Ն որոշում

6. Կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներից ապրանքների ներմուծումն ազատվում է մաքսատուրքից:

Մաքսային միության հանձնաժողովի 2009թ. նոյեմբերի 27-ի №130 որոշում՝ կետ 7.3

7. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագիր իրականացնող ռեզիդենտի (բացառությամբ առևտրի կամ ֆինանսական ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտի)՝ գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող երկու հաշվետու տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան հաշվետու տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենք հոդված 33

8. Հայաստանի սահմանամերձ գոտիներում գործունեությունը ազատված է ԱԱՀ-ից և շահութահարկից:

«Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենք հոդված 3,

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 15-ի N 30-Ն որոշում

9. Տավուշի մարզի Դիլիջան համայնքում առնվազն 2 միլիարդ դրամի ներդրմամբ ծրագրերի իրականացման շրջանակներում գործունեությունը ազատված է ԱԱՀ-ից և շահութահարկից:

«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքն հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՀ օրենք հոդված 10

10. Շահութահարկի, գույքահարկի, հողահարկի արտոնությունների հնարավորություն Հայաստանի արդյունաբերական գոտիներում:

«Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենք հոդված 17

11. Հայաստանի ազատ տնտեսական գոտիների շահագործողներն ազատված են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի և մաքսատուրքի վճարման պարտավորություններից: Իսկ գոտում պետական մարմինների կողմից ծառայությունները կմատուցվեն «մեկ պատուհան» սկզբունքով:

«Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենք հոդված 13,

ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 13-ի N 1521-Ն որոշում,

ՀՀ կառավարության 2012թ. մարտի 15-ի N 292-Ն որոշում

Տեղեկություն. Ներկայումս Հայաստանում գործում է «Ալյանս» ազատ տնտեսական գոտին (<http://fez.am/arm/index.php>) բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության ո-

լորտում և «ՄԵՏԻԴԻԱՆ» ազատ տնտեսական գոտին ոսկերչության, ակնագործության ու ժամագործության ոլորտներում:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 7, հեռ.՝ (060) 54-46-57, թեժ գիծ՝ 060 54-44-44:

18. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան (Պաշտպան)

Ո՞վ է Պաշտպանը

Պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

ՀՀ Սահմանադրության հոդված 19

Ո՞ր բողոքներն են ենթական Պաշտպանի քննարկմանը

Պաշտպանը բողոքի առկայության դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ քննարկում է՝

1. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած

լիագորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումները.

2. հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը, եթե տեղեկություն կա մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական միջոցները:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 15

Ո՞վ կարող է դիմել Պաշտպանին

Պաշտպանին կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական (անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից) և իրավաբանական անձ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 16

Արդյո՞ք Պաշտպանին դիմելու համար անհրաժեշտ է վճարել

Պաշտպանին դիմելու կամ բողոք հասցեագրելու համար որևէ վճար կամ պետական տուրք նախատեսված չէ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 17

Ինչպե՞ս պետք է դիմել Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին

Բողոքը Պաշտպանին ներկայացվում է գրավոր կամ բանավոր կարգով: Գրավոր կարգով ներկայացվող բողոքները քաղաքացին անձամբ կարող է ներկայացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, ուղարկել փոստային ծառայության միջոցով կամ ներկայացնել առցանց:

Բողոքի համար որևէ հատուկ ձև սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմողի անուն-ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը:

Բողոքում պետք է նշվեն նաև մարդու ենթադրյալ խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները: Եթե դիմողն ունի գործի պարզաբանման և լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ապա դրանք ևս կարող են կցվել բողոքին:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 16 և 17

Ի՞նչ բողոքներ չեն քննվում Պաշտպանի կողմից:

Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք

- 1) պետք է լուծվեն միայն դատական կարգով: Պաշտպանը դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումը

սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան:

- 2) ներկայացվել են մեկ տարուց ավելի ուշ այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների խախտման մասին,
- 3) Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում,
- 4) անանուն են կամ չեն պարունակում դիմողի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը եւ գտնվելու վայրը,
- 5) պահանջ չեն պարունակում:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 21

Ի՞նչ որոշումներ է կայացնում Պաշտպանը

Բողոքն ստանալուց և հաշվառելուց անմիջապես հետո Պաշտպանի սահմանած կարգով իրականացվում է բողոքի ուսումնասիրություն, որի հիման վրա կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1. բողոքը քննարկման ընդունելու մասին,
2. բողոքը չքննարկելու մասին,
3. բողոք ներկայացրած անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին,
4. բողոքն այլ մարմնի քննարկմանը փոխանցելու մասին:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 19

19.Այլ հարցեր

Ինչպե՞ս է դրսևորվում կանանց նկատմամբ բռնությունը

Կանանց նկատմամբ բռնությունը իրենից ներկայացնում է կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն անհավասար իշխանական հարաբերությունների դրսևորում, որոնք հանգեցրել են տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ գերիշխող դիրքի հաստատմանն ու խտրականության և կանանց լիարժեք առաջխաղացման արգելակմանը:

Կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների խախտում է և խտրականության ձև և ներառում է գենդերային հիմքով բռնության այն բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում՝ նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում:

Ի՞նչ է նշանակում «ընտանեկան բռնություն» հասկացությունը

Ընտանեկան բռնություն նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ

գուզնկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում:

Եվրոպայի Խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա, 11.05.2011թ.

Կանանց նկատմամբ բռնությունների դեպքում կարող եք դիմել Կանանց իրավունքների կենտրոն հետևյալ հեռախոսահամարով 010 54 28 28

Թեժ գիժ 0800 80 850/

Ի՞նչ է հանրային պաշտպանությունը

Հանրային պաշտպանություն է համարվում հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը:

Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝

1. խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.
2. ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Ո՞վքեր կարող են օգվել հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունից

Հանրային պաշտպանի գրասենյակը, բացառությամբ քրեական գործով կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանա-

կան օգնություն տրամադրելու, անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է հետևյալ անձանց՝

1. Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.
2. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.
3. դատապարտյալներին.
4. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.
5. Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.
6. գործազուրկներին.
7. միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.
8. առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.
9. փախստականներին.
10. Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին.
11. անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարարելամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազա-

գույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.

12. հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց.
13. օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց.
14. Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին.
15. խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով:

Անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրամադրվել հետևյալ դեպքերում

1. ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով).
2. նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ.
3. եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:

Հավելված 1

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 56ա,

հեռ.՝ 010 53 76 51,

Թեժ գիծ՝ 116,

էլ. հասցե՝ www.ombuds.am,

էլ. փոստ՝ ombuds@ombuds.am:

Դիմեք Պաշտպանին, եթե Ձեր իրավունքները խախտել են պետական մարմինները կամ պաշտոնատար անձինք: Պաշտպանը չի քննարկում այն գործերը, որոնք դատարանում են կամ պետք է լինեն այնտեղ:

Անվճար խորհրդատվություն տրամադրող կազմակերպություններ

Հանրային պաշտպանի գրասենյակ, հասցե՝ ք. Երևան, Զաքիյան 2, 2-րդ հարկ, հեռ.՝ 010 60 46 05,

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչություն, հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 9, 406 սենյակ, հեռ.՝ 060 61 22 90, 060 61 22 90,

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից ընդունված՝ սփրիահայերին առնչվող իրավական ակտերի ցանկ

1. Հայաստանի Հանրապետության օրենքը «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» 2012 թվականի նոյեմբերի 1-ի ՀՕ-185-Ն,

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 950-Ն որոշում,
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի «Այն պետությունների ցանկը հաստատելու մասին, որոնց քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու կապակցությամբ առաջին անգամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կարող է տրվել օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում» N 951-Ն որոշում,
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Միրիայի Արաբական Հանրապետության ազգությամբ հայ քաղաքացիների վարորդական վկայականները փոխանակելու մասին» N 1106-Ն որոշում,
5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 22-ի «Պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին» N 1469 -Ն որոշում,
6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-Ի N 1290-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 983-Ն,
7. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի հունվարի 14-ի «Միրիահայերի հիմնախնդիրները

համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N 9–Ա որոշում,

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի «Սիրիայի Արաբական Հանրապետության ազգությամբ հայ քաղաքացիների վարորդական վկայականները փոխանակելու մասին» N 334-Ն որոշում,
9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի «Աշտարակ քաղաքում «Նոր Հալեպ» թաղամասի կառուցմանն աջակցելու մասին» N 656-Ն որոշում,
10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 951-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1099,
11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 31-ի «Սիրիայի Արաբական Հանրապետության՝ ազգությամբ հայ քաղաքացիների կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգումը թույլատրելու մասին» N 1199-Ն որոշում,
12. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N 334-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1205-Ն որոշում,

13. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի N 1183-Ն որոշման մեջ փոփոխություն եվ լրացում կատարելու մասին» N 1433-Ն որոշում:
14. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N 334-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N725-Ն որոշում
15. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 951-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N803-Ն որոշում
16. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N1364 - Ն որոշում
17. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 31-ի N 1199-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1263-Ն որոշում
18. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության

կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N334-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 564-Ն որոշում.

19. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N951-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 879-Ն որոշում.
20. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1244-Ն որոշում.
21. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի ապրիլի 15-ի «Սիրիայի Արաբական Հանրապետության՝ ազգությամբ հայ քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականներ հատկացնելու մասին» N 389-Ն որոշում.
22. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի ապրիլի N 389-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1055-Ն որոշում.
23. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N951-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1246-Ն որոշում.

24. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում փոփոխություն, վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N1555-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին գումար հատկացնելու մասին» N 1189-Ն որոշում.
25. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի հունվարի 14-ի N9-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 651-Ա որոշում:
26. ՀՀ վարչապետի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի հունվարի 14-ի N9 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» N 1190-Ա որոշում:

2016-2017թթ. ընդունված իրավական ակտերը, որոնք վերաբերվում են փախստականներին և ապաստան հայցողներին

- «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, համաձայն որի՝ ապաստան հայցողները որպես խոցելի խումբ ընդգրկվել են հանրային պաշտպանի կողմից մատուցվող անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց շարքում (ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016թ. հոկտեմբերի 17-ին):

- «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, համաձայն որի՝ ազատազրկման վայրերում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ՀՀ-ում ապաստանի հայց կարող են ներկայացնել ազատազրկման վայրի վարչակազմի միջոցով (ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016թ. հոկտեմբերի 19-ին):
- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին՝ ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի, համաձայն որի՝ «Օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը ապաստանի խնդրանք ներկայացնելու իրավունք ունի, որը համապատասխան վարչակազմի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ենթակա է փոխանցման միգրացիայի հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին (ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 19-ին)
- «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016թ. սեպտեմբերի 15-ին թիվ 951-Ն որոշումը, որով կանոնակարգվում են ժամանակավոր տեղավորման կենտրոնում չտեղավորված ապաստան հայցողներին բնակարան վարձակալելու նպատակով դրամական օգնության տրամադրման հետ կապված հարցերը:

- «ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գորքերի, ոստիկանության կամ ազատագրկման վայրերի վարչակազմի կողմից ապաստանի խնդրանքի ընդունման և այն լիազոր մարմնին փոխանցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016թ. նոյեմբերի 10-ին թիվ 1147-Ն որոշում, որով կանոնակարգվում են ապաստանի խնդրանքի ընդունման և այն ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությանը փոխանցելու հետ կապված հարցերը:
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1268-Ն որոշում, որում ամրագրվել է առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների՝ առաջնահերթության կարգով ժամանակավոր տեղա-վորման կենտրոնում տեղավորման իրավունքը, ինչպես նաև նախատեսվել են դրույթներ կենտրոնում ներքին կարգապահական կանոնների և դրանց խախտման հետևանքների վերաբերյալ:
- «Ապաստանի ընթացակարգի շրջանակներում ներկայացուցիչ նշանակելու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. մարտի 9-ի թիվ 239-Ն որոշում, որով կարգավորվում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա ապաստան հայցողի, ինչպես նաև հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության կամ հաշմանդամության հետևանքով ապաստանի տրամադրման ընթացակարգի

էությունն ու նշանակությունը գիտակցելու ունակություն չունեցող ապաստան հայցողի համար ապաստանի տրամադրման ընթացակարգում ներկայացուցիչ նշանակելու հետ կապված հարցերը:

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի թիվ N 783-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. փետրվարի 9-ի թիվ 121-Ն որոշում, որով նախատեսված է, որ պետական սահմանի անցման կետերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապաստան հայցողներին խորհրդատվություն տրամադրելու իրավասություն ունեցող կազմակերպությունների ցանկը, որոնց աշխատակիցներն ունեն ապաստան հայցողի և նրա ընտանիք անդամների հետ անարգել տեսակցության իրավունք, սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից՝ խորհրդակցելով Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ:
- Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016թ. օգոստոսի 10-ի թիվ 10-Ն հրաման, որը պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության նախարարությունում:

- «ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության նոր աշխատողների համար նախնական (ներածական) վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 55-Ա հրաման:

